# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

33ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 11 (1611) ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 30, 2013
VOLUME 33, NO. 11 (1611) SATURDAY, MARCH 30, 2013

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՍՈՒՐԲ ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ

*«...ՏԵՍԱՔ ԶՏԷՐ» (ՅՈՎՀ. 20:25)*



*Քրիստոսի հրաշալի Յարութենէն յետոյ արտասանուած այս խօսքը իր մէջ կ'ամփոփէ այն գերագոյն ճշմարտութիւնը, որուն զգացողութիւնն ու հաւատքի գիտակցութիւնը ունեցած էին Անոր առաքեալները եւ հաստատակամ յայտարարած էին իրենց պատգամը դիմելով Թովմասին ու ժամանակներու հոլովոյթներուն հետ ծնունդ առած նոր Թովմասներուն.*

*«...Տեսաք զՏէր»:*

*Այս բառերուն մէջ կայ կենդանի պատկերը Յարութեան մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի, որուն հետ հաղորդակցութեան ընդառաջ եկող մարդը իր էութեանը մէջ կը զգայ մահուան պարտութիւնը: Քրիստոս Իր յաղթական Յարութեամբ կը յեղաշրջէ մարդկութեան կեանքը դէպի լոյս եւ առաւել կեանք: Քրիստոսի Յարութեան մէջ խտացած է աստուածային յաւերժականութեամբ նուիրականացած զօրութիւն, անսպառ եռանդ: Խոնարհումով ապրուած կեանքերը գիտեն եւ կ'ապրին անկորնչելի արժէքը Յարութեան խորհուրդին, որուն առաջնորդութեամբ ալ միութիւն են հաստատած Աստուծոյ հետ եւ Անոր առաջնորդութեամբ ապրած են հրաշագործուած կեանք: Եթէ մեր նախնիք չունենային Յարութեան խորհուրդով սրբագործուած կեանք, իցիւ թէ մենք այսօր ապրէք որպէս Նոր Հայաստան, դէպի Երկինք սլացող յաւերժական Սուրբ Էջմիածին եւ կեանքի հորիզոնները վերածէինք արշալոյսներ:*

*Յարութեան խորհուրդին առջեւ ծնրադիր մեր Սուրբ Եկեղեցւոյ հայրերը իրենց էութեանը մէջ*

*Շար.ը էջ 5*

## ՍԱՐԳՍԵԱՆ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ՝ ՓՈԽԱԴԱՐՁ ՆԱՄԱԿՆԵՐՈՎ

*Հայաստանի վերջին նախագահական ընտրութիւններու պաշտօնական տուեալներով երկրորդ տեղը գրաւած ընդդիմադիր թեկնածու՝ Րաֆֆի Յովհաննիսեան նամակ մը յղած էր Սերժ Սարգսեանին, ուր ան պատրաստակամութիւն կը յայտնէր «տէ ֆաքթօ» ճանչնալ անոր նախագահութիւնը, եթէ ան համաձայն գտնուի արտահերթ նախագահական կամ համամասնական ընտրակարգով խորհրդարանական ընտրութիւններ հրաւիրելու եւ մինչ այդ, առնուազն 8 կարեւոր պաշտօններ զիջելու ընդդիմադրութեան:*

*Մարտ 25-ին նախագահ Սերժ Սարգսեան պատասխանելով Րաֆֆի Յովհաննիսեանի առաջարկներուն, պատրաստակամութիւն յայտնած էր երկխօսութիւն սկսելու՝ յորդորելով Յովհաննիսեանին դադրեցնել հացադուլը, «մէկ-երկու օր կազդուրուել» եւ միասին լուրջ աշխատել:*

*Ի պատասխան Սարգսեանի նամակին, «Ժառանգութեան» առաջնորդը դարձեալ նամակով նախագահին առաջարկեց հանդիպիլ «ցանկացած ժամի ու ցանկացած ձեւաչափով՝ Ազատութեան հրապարակում»:*

*Այս կապակցութեամբ յայտարարութեամբ հանդէս եկաւ Նախագահի մամլոյ խօսնակ Արմէն Արզումանեան: Ան իր յայտարարութեան մէջ մասնաւորապէս կ'ըսէր, որ Նախագահին կողմէ Մարտի 25-ին Յովհաննիսեանին ներկայացուած առաջարկութիւնը տակաւին կը շարունակէ մնալ ուժի մէջ, «չնայած հրապարակից հնչող անհիմն վերջնագրերի լեզուն ժամ առ ժամ նուազեցնում է դրա արդ-*

*Շար.ը էջ 4*

## ՀԱԽ-Ի ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՀԱՒԱՔՈՅԹԸ ԿԼԵՆՏԷՅԼԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ



**Ձախէն աջ՝ Շահէ Քէօրօղլեան, Լորա Ֆրիտմըն եւ Արա Նաճարեան**

*Կլենտէյլ քաղաքի Ապրիլ 2ին կայանալիք քաղաքապետարանի եւ այլ յարակից բաժանմունքներու պաշտօններուն համար տեղի ունենալիք ընտրութիւններու կապակցութեամբ զօրակցական հաւաքոյթ մը տեղի ունեցաւ Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Լենա Խոտանեաններու բնակարանին մէջ:*

*Ս.Դ.Հ.Կ.ի Հայ Ամերիկեան Խորհուրդին (ՀԱԽ) կողմէ կազմակերպուած սոյն միջոցառումին ներկայ եղան Կլենտէյլի եւ շրջակայ հայութիւնը ներկայացնող աւելի քան 40 հոգի: Ներկաներուն մէջ կը նշմարուէին Ս.Դ.Հ.Կ.ի ղեկավարներ, տարբեր կառոյցներու, ընտրական յանձնախումբերու եւ մամուլի ներկայացուցիչներ:*

*Իր բացման խօսքին մէջ Քրիստին Խաչատուրեան ՀԱԽ-ի անունով ողջունեց ներկայութիւնը Քաղաքապետական Ընտրութեան թեկնածուներ Արա Նաճարեանի, Լորա Ֆրիտսմընի եւ Շահէ Քէօրօղլեանի: Ան բնութագրեց իւրաքանչիւր թեկնածուի առանձնայատկութիւններն ու համայնքային կեանքին մէջ իրենց ունեցած հարուստ փորձառութիւնն ու նուիրումը առաւել եւս օգտակար հանդիսանալու շրջանի բնակչութեան կենսական կարիքներուն բարելաւումին:*

*Այնուհետեւ ելոյթ ունեցան*

*Շար.ը էջ 18*

## ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋ ԵԼՈՅԹ ՈՒՆԵՑԱՒ ՓՐՈՖ. ԹԱՆԷՐ ԱՔՉԱՄ



**Ելոյթ կ'ունենայ Փրոֆ. Թանէր Աքչամ**

**ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ**

*Ուրբաթ, Մարտ 22, 2012, Պոլսահայ Միութեան նախաձեռնութեամբ եւ գաղութիս բոլոր կազմակերպութիւններու ներկայութեամբ տեղի ունեցաւ յատուկ դասախօսութիւն-քննարկում՝ Միացեալ Նահանգներու մէջ Հայոց Ցեղասպանութեան հետազօտութեան եւ ուսումնասիրութեան պատմագիտական յայտագիրներու եւ այս ուղղութեամբ գործադրուած յառաջդիմութիւններու եւ ձախողութիւններու մասին:*

*Սոյն երեկոյի դասախօսն էր Փրոֆ. Թանէր Աքչամ, Մասաչուսէցի Գլարք Համալսարանի՝ Մուկար ամպիոնի նախագահ, որ կը ներկայացնէ նաեւ Հայոց Ցեղասպանութեան եւ Ուսումնասիրութեան միակ պատմագիտական յայտագիրը՝ ընդհանուր Միացեալ Նահանգներու տարածքին: Յայտագրին որպէս քննարկող-դասախօս ներկայ էր նաեւ Փրոֆ. Րիչըրտ Հրայր Տէօքմէճեան ՝ Տնօրէն USC Համալսարանի Հայկական Ուսումնասիրութիւններու Յայտագրին:*

*Բարի Գալուստի իր խօսքով բեմ ներկայացաւ ՝ Պոլսահայ Միութեան ատենապետ Պր. Գուրգէն*

*Շար.ը էջ 18*

## ՇՆՈՐՀԱՒՈՐ Ս. ԶԱՏԻԿ

Սուրբ Յարութեան տօնին առիթով «Մասիս» շաբաթաթերթը ջերմօրէն կը շնորհաւորէ իր ընթերցողներուն եւ համայն հայութեան Ս. Զատիկը:

# «ՏԵԺԱՒՈՒ», ԿԱՄ ԻՆՉՈՒ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՑ ՕՊԱՄԱՆ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Սերժ Սարգսեանի պատասխանից յետոյ, որ նա տուել է Րաֆֆի Յովհաննիսեանին, կարծես թէ «տեժաւու»ի զգացում է շատերի մօտ: Բանն այն է, որ երկու տարի առաջ Սերժ Սարգսեանը մի անգամ արդէն իսկ նստել է ընդդիմութեան հետ «Թուղթ ու գրիչով» բանակցելու կամ երկխօսելու, որի արդիւնքը յայտնի է բոլորին, այդ թւում ամենայն հաւանականութեամբ նաեւ Րաֆֆի Յովհաննիսեանին: Ի դէպ, այն ժամանակ ընդդիմութիւնը, այսինքն ՀԱԿ-ը, նրան դիտարկում էր որպէս Ռոբերդ Քոչարեանի գործիք, որը փորձում է իր նախաձեռնութիւններով տապալել երկխօսութիւնը:*

*Ներկայում կարծես թէ տեղերը փոխուել են, եւ Ռոբերդ Քոչարեանի քաղաքական առանցքի շուրջ միաւորուած ուժերի համար է խնդիր դառնում Սերժ Սարգսեանի եւ Րաֆֆի Յովհաննիսեանի միջեւ հնարաւոր երկխօսութիւնը, քանի որ այդ միջոցով կարող է պարզապէս քաղաքական կնիք ստանալ ներքաղաքական գործընթացի լուսանցքում նրանց յայտնուելը:*

*Բայց, նկատի ունենալով այսպէս ասած առաջին երկխօսութեան փորձը, պարզ է դառնում նաեւ, որ լուսանցքում յայտնուելու ոչ պակաս վտանգ կայ նաեւ Սերժ Սարգսեանի հետ երկխօսութեան գնացող սուբիեկտի համար:*

*Ինչ տարբերութիւն կայ առաջին երկխօսութեան, եւ երկրորդ հնարաւորի միջեւ: Առաջին տարբերութիւնը կարող է լինել այն, որ բանակցում են ոչ թէ առաջին դէմքերի պատուիրակները, այլ առաջին դէմքերն իրենք: Եթէ Րաֆֆի Յովհաննիսեանը համաձայնի Սերժ Սարգսեանի առաջարկին եւ ի վերջոյ լինի բանակցութիւն, ապա կարեւոր խնդիրներից մէկը հենց այն է, որ բանակցութիւնը պէտք է լինի բացառապէս լիդերների մակարդակով, կամ հիմնական ռաունդները պէտք է լինեն այդ մակարդակով:*

*Հնարաւոր բանակցութեան դէպքում Րաֆֆի Յովհաննիսեանն ունի արդէն ոչ միայն առաջին երկխօսութեան դասերը՝ ՀԱԿ-իշխանութիւն, այլ նաեւ Սերժ Սարգսեանի հետ առաջին հանդիպման դասը, որը առաւել Թարմ է ու խօսուն: Խօսքն այն մասին է, որ փակ հանդիպումը Սերժ Սարգսեանը բաւական հմտօրէն վերածեց քարոզչատեղեկատուական մանիպուլյացիայի, եւ որքան էլ Րաֆֆի Յովհաննիսեանը յետոյ շտկեց վիճակը իր յայտարարութիւններով, յորդորներով եւ պահանջներով, միեւնոյն է, նստուածքը, ինչպէս յայտնի հրէական անեկդոտում, մնաց:*

*Առաջին երկխօսութեան համեմատ, հաւանական երկրորդ երկխօսութեան տարբերութիւն է նաեւ միջավայրը: Առաջին երկխօսութիւնը տեղի ունեցաւ համապետական ընտրութիւնից յետոյ ժամանակահատուածում, ընտրական միջակայքում: Գործընթացն ըստ էութեան սկսեց Փետրուարից՝ երբ արաբական գարուն էր ու նաեւ սոցիալական մեծ լարում: Երկխօսութիւնը եղաւ մի քանի ամիս անց միայն:*

*Ներկայում, դեռեւս պահպանւում է յետընտրական ակտիւութիւնը, իսկ երկու ամիս անց էլ Երեւանի Աւագանու ընտրութիւն է, որում ակտիւանում են նախագահի ընտրութիւնը բաց թողած ուժերը: Սոցիալական վիճակը հանրութեան մօտ աւելի լաւը չէ, կան նոր դժգոհ խմբեր, սակայն Րաֆֆի Յովհաննիսեանի շարժման հիմքում կարծես թէ դա առանցքային դեր չունի, եւ շարժումն ինքնին, խոշոր հաշուով առեղծուած է շարունակում մնալ՝ նախագահի ընտրութեան նախնական առաջին արդիւնքների հրապարակումից մինչ այժմ, երբ թւում է, որ բացարձակապէս ապաքաղաքական մեթոդներով, Րաֆֆի Յովհաննիսեանը հասնում է քաղաքական որոշ առումներով անգամ աննախադէպ արդիւնքի: Թէկուզ միայն նրա ստացած քուէների քանակը:*

*Առաջին երկխօսութեան համեմատ մէկ այլ տարբերութիւն կարող է լինել այն, որ բանակցութիւնը կ'ընթանայ կոնկրետ ոլորտների շուրջ: Եթէ ՀԱԿ-ը դնում էր իշխանութիւն յանձնելու խնդիր, ապա Րաֆֆի Յովհաննիսեանը գոնէ ձեւակերպումների առումով խնդիրը դնում է այլ կերպ՝ յանձնել ընդդիմութեանը կոնկրետ ոլորտներ: Այլ հարց է իհարկէ, որ այդ կոնկրետ ոլորտների յանձնելը եթէ ոչ ակնթարթային, ապա որոշակի ժամանակի առումով հաւասարազօր կարող է լինել իշխանութիւնը յանձնելուն: Թէեւ, իհարկէ, դրա համար էլ Սերժ Սարգսեանն առաջարկում է բանակցել, երեւի թէ համաձայն լինելով յանձնել, բայց ոչ այնքան, որ հաւասարազօր լինի ժամանակի ընթացքում իշխանութիւնը յանձնելուն:*

*Ամենակարեւոր հարցերից մէկը երեւի թէ այն է, թէ իսկ արդեօք կայ երկխօսութեան կազմակերպիչների կամ հովանաւորների մասով տարբերութիւն: 2011 թուականին կայացած երկխօսութեան կազմակերպիչը կամ միջնորդը, կամ այսպէս ասած հովանաւորը, ըստ հայկական մամուլի՝ ԱՄՆ դեսպան Մարի Եովանովիչն էր: Դեսպանն իհարկէ հերքում էր այդ ամէնը, սակայն ուշագրաւ յայտարարութիւն էր արել ԱՄՆ Կոնգրեսում Հայաստանում ԱՄՆ ներկայիս դեսպան Ջոն Հեֆերնը:*

*Իր նշանակման հարցով լսումների ժամանակ Հեֆերնը յայտարարել էր, որ Հայաստանի ներքաղաքական դաշտում ի յայտ եկած հանդուրժողութեան մթնոլորտի հարցում մեծ աւանդ ունի նախկին դեսպան Մարի Եովանովիչը:*

*Ինչ աւանդ կարող է ունենալ ներկայիս իրավիճակում ինքը՝ Ջոն Հեֆերնը: Քաղաքական առումով նա կարծես թէ բաւական զուսպ է եղել, բաւական ակտիւ լինելով տնտեսական հարցերում եւ զբաղուելով Հայաստան նոր ներդրումների ներգրաւման խնդրով: Բայց, պարզ է նաեւ, որ դա ընդամէնը քաղաքականութեան հակառակ երեսն է՝ բոլոր մակարդակներում:*

*Բացի այդ, շատ ուշագրաւ է, որ Հեֆերնը իր տիկնոջ հետ Րաֆֆի Յովհաննիսեանին էր այցելել Մարտի 22-ի առաւօտեան, այն օրը, երբ երեկոյեան Րաֆֆի Յովհաննիսեանը պէտք է յայտարարէր Սերժ Սարգսեանին իր վերջին առաջարկների մասին, ինչն էլ արեց, եւ որին էլ փաստացի նախնական համաձայնութեամբ է պատասխանել Սերժ Սարգսեանը:*

*Երկխօսութեան առաջին եւ անյաջող փորձից յետոյ երկու տարի անց հնարաւոր է ԱՄՆ փորձում է նախաձեռնել երկրորդը, գուցէ առաջինից որոշակի դասեր քաղած, ինչը կարող է տալ երկրորդ փորձի առաւել արդիւնաւէտութեան հեռանկար, արդարացնելով Պարակ Օպամայի շնորհաւորանքը:*

*«ԼՐԱԳԻՐ»*

ÆÝã ï³ñµ»ñáõÃÇõÝ Ï³Û ³é³çÇÝ »ñÏËûëáõÃ»³Ý, »õ »ñÏñáñ¹ ÑÝ³ñ³õáñÇ ÙÇç»õ: ²é³çÇÝ ï³ñµ»ñáõÃÇõÝÁ Ï³ñáÕ ¿ ÉÇÝ»É ³ÛÝ, áñ µ³Ý³ÏóáõÙ »Ý áã Ã¿ ³é³çÇÝ ¹¿Ùù»ñÇ å³ïáõÇñ³ÏÝ»ñÁ, ³ÛÉ ³é³çÇÝ ¹¿Ùù»ñÝ Çñ»Ýù

# ՄԻԱԿ ԵԼՔԸ

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*

*Եւ այսպէս, իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ սկսւում է երկխօսութեան նման մի բան: Ընդհանուր առմամբ, դա դրական երեւոյթ է: Յիշեցնեմ, որ ես կողմ էի նաեւ 2011 թուականի ՀԱԿ-կոալիցիա երկխօսութեանը՝ ոչինչ, որ այն ոչ մի արդիւնքի չբերեց: Ես անվերապահօրէն կողմ կը լինէի նաեւ 2012 թուականի ՀԱԿ-ԲՀԿ երկխօսութեանը, եթէ պարզ լինէր դրա օրակարգը: Բայց քանի որ օրակարգը, նոյնիսկ ընդհանուր գծերով, չէր բացայայտւում, դա կասկածների տեղիք էր տալիս: Ես, օրինակ, կասկածում էի, որ այդ երկխօսութեան (կամ համագործակցութեան) արդիւնքում կարող է կրկին իշխանութեան գալ Ռոբերդ Քոչարեանը, սակայն այդ, ինձ համար ամենատհաճ սցենարը, առայժմ, յամենայնդէպս, չիրականացաւ:*

*Ասածս այն է, որ երկխօսութեան խորհրդապահութեան հարցում չարժէ ընկնել ծայրայեղութիւնների մէջ: Գուցէ տեղին չէ փոխանակուել բաց նամակներով, ինչպէս որ դա անում են ներկայիս երկխօսողները՝ այդ դէպքում երկու կողմից էլ անխուսափելի են PR-ի տարրերը: Բայց պէտք չէ նաեւ այն աստիճանի մշուշապատել բանակցութիւնները գերգաղտնիութեան շղարշով, որ «չուզողները» կարողանան դրա վերաբերեալ ինչ ասես՝ մոգոնել, իսկ «ուզողները» սկսեն կասկածել:*

*Րաֆֆի Յովհաննիսեան-Սերժ Սարգսեան երկխօսութիւնը, անկախ իր ձեւական թերութիւններից, պէտք է խրախուսել: Իհարկէ, հնարաւոր չէ չարձանագրել բանակցողների թերի կողմերը: Իշխանութիւնը, ՀՀԿ-ն եւ այդ կուսակցութեան առաջնորդը խոստացել էին աննախադէպ ժողովրդավարական եւ թափանցիկ ընտրութիւններ, սակայն ընտրութիւնների օրը եւ մանաւանդ երեկոյեան «ստացուել է ինչպէս միշտ»:*

*Րաֆֆի Յովհաննիսեանը սկզբում ասել է, որ Ազատութեան հրապարակում չի լինի ոչ մի տառապանք եւ հացադուլ, իսկ յետոյ նստել է հացադուլի: Նա սկզբում սպառնացել է նախագահին, որ վերջինս կ'երդուի իր դիակի վրայով, իսկ այնուհետեւ մտել է քաղաքական երկխօսութեան մէջ՝ չբացառելով, որ Սերժ Սարգսեանը 5 տարի զբաղեցնելու է իր աթոռը: Բայց հիմա ցանկալի է ոչ թէ սրել հակասութիւնները, ոչ թէ կշտամբել կողմերին, այլ հակառակը՝ չվարկաբեկել, չհեգնել երկխօսութիւնը եւ դրանով բացասական իմաստով «թասիբի չգցել» դրա մասնակիցներին: Առայժմ պարզ չէ, թէ ինչով կարող են աւարտուել բանակցութիւնները, փոխարէնը կարելի է վստահաբար ասել, թէ ինչ կը լինի, եթէ Սերժ Սարգսեանը եւ Րաֆֆի Յովհաննիսեանը երկու ոտքը դնեն մի կօշիկի մէջ եւ իրենց շրջապատող «բազեների» յորդորով ցուցաբերեն «վճռականութիւն»:*

*Ընդդիմադիր շարժումը կը մարի ճիշդ այնպէս, ինչպէս դա եղաւ նախորդ շարժումների հետ, հասարակութեան մէջ կը տիրի աւելի մեծ յուսահատութիւն, քան կար ընտրութիւններից առաջ, եւ որեւէ ոլորտում փոփոխութիւնների յոյս մօտակայ ժամանակներս չի լինելու: Այդպէս կը լինի, կրկնեմ, եթէ կողմերն անզիջում դիրք զբաղեցնեն, որովհետեւ այդպէս է վերջանում ցանկացած առաւելապաշտութիւն: Որ նման ելքը ձեռնտու չէ Րաֆֆի Յովհաննիսեանին՝ ակնյայտ է: Բայց դա նոյնքան կը դժուարացնի նաեւ Սերժ Սարգսեանի կեանքը, որովհետեւ նախագահն այդպիսով ամբողջութեամբ կախուած կը լինի «ձայներ բերող տղաներից»: Այնպէս որ՝ բանակցութիւնները եւ դրանց արդիւնքում ծնուած փոխզիջումը միակ արդիւնաւէտ ելքն են:*

*«ԱՌԱՒՕՏ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆ

## «ՀԱԿ ԽՄԲԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԿԱՆ ՄԱՐԴԻԿ, ՈՎՔԵՐ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆ ԱՅՍ ՇԱՐԺՄԱՆ ԴԷՄ».- ՌՈՒԲԷՆ ՅԱԿՈԲԵԱՆ

Հայ ազգային կոնգրէս խմբակցութեան մէջ կան մարդիկ, ովքեր պայքարում են այս շարժման դէմ: Այս մասին Մարտի 26-ին, Ազատութեան հրապարակում կայացած ասուլիսի ժամանակ ասաց «Ժառանգութեան» փոխնախագահ, խմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեանը:



«Ժառանգութեան» փոխնախագահ Ռուբէն Յակոբեան

Նա նշեց, որ այդ խմբակցութեան մէջ իրենք ունեն շատ լաւ ընկերներ, բայց այդ խմբակցութեան որոշ ներկայացուցիչներ իրենց գնահատականներով չեն տարբերւում ՀՀԿ- ականների հնչեցրած գնահատականներից:

Ռուբէն Յակոբեանը շեշտեց, որ Երեւանի աւագանու ընտրութիւններին պատրաստ են համագործակցել ՀԱԿ-ի հետ բայց նա խորհուրդ է տալիս իշխանութիւնների հետ միասին չլծուել՝ հարուածելու շարժմանը եւ Րաֆֆի Յովհաննիսեանին:

«Ժառանգութեան» ներկայացուցչի խօսքով՝ իրենք իրենց չափով կարողացել են պահել հանդուրժողականութեան մթնոլորտը, համագործակցել են նաեւ ոստիկանութեան հետ: «Այս շարժման հիմնական նուաճումներից մէկն այն է, որ հարթակը չմենաշնորհուեց, այդտեղ յայտնուեցին ամենատարբեր կողմնորոշում ունեցող գործիչներ, բոլորը հնարաւորութիւն ունեցան խօսել քաղաքական ծրագրերից»,- նշեց նա:

Ռուբէն Յակոբեանը իշխանութիւնների ուշադրութիւնը հրաւիրեց նաեւ Մարտի 23-ին Ազատութեան հրապարակում տեղի ունեցած միջադէպին: Նա պատմեց, որ այդ անձնաւորութիւնը ցանկանում էր հասնել մինչեւ հարթակ, որտեղ գտնւում էր Րաֆֆի Յովհաննիսեանը, «այդ ընթացքում նա անցել է ոստիկանների կողքով, ովքեր կանխարգելիչ միջոցներ չեն ձեռնարկել, հայհոյել է, հրել մարդկանց, եթէ չլինէին Րաֆֆի Յովհաննիսեանի մօտ կանգնած մարդիկ, դա կարող էր ողբերգական հետեւանքներ ունենալ»:

«Այդ քաղաքացին ձեռքին ունեցել է ինչ-որ բան, չի երեւացել, թէ ինչ: Մտահոգիչ է, թէ որտեղ է գտնւում այդ քաղաքացին եւ ինչ միջոցառումներ են ձեռնարկւում այդ միջադէպի հետ կապուած»,- նշեց Ռուբէն Յակոբեանը:

## ՀԱԿ-Ի ԹԵԿՆԱԾՈՒՆ ԿԱՐԵՒՈՐՈՒՄ Է ՈՉ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Երեւանի աւագանու ընտրութիւններում ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէս կուսակցութեան ընտրացուցակը գլխաւորող Վահագն Խաչատրեանը համոզուած է, որ եթէ ընտրապայքար մտած ոչ իշխանական ուժերը համագործակցեն, միասնաբար պայքարեն ընտրակեղծիքների դէմ, ապա հնարաւոր է մեծամասնութիւն ձեւաւորել Երեւանի աւագանիում:



ՀԱԿ-ի ընտրացուցակը գլխաւորող Վահագն Խաչատրեան

Խաչատրեանը 1992-1996 թուականներին Երեւանի քաղաքապետն էր: ՀԱԿ-ի ցուցակում երկրորդ հորիզոնականում Զոյա Թադեւոսեանն է, երրորդը՝ Արման Մուսինեանը:

«Հայ ազգային կոնգրէս, Դաշնակցութիւն, «Բարգաւաճ» եւ «Ժառանգութիւն» կամ «Բարեւ, Երեւան» դաշինք՝ հնարաւորութիւն կայ միասնական աշխատելու դէպքում իսկապէս արդիւնքի հասնել, իշխանութեանը չթողնել վերարտադրուել Երեւանում: Ոչ իշխանական ուժերը պէտք է խնդիր դնել իսկապէս մաքսիմալ ձայներ հաւաքել, որպէսզի Երեւանի քաղաքապետ ընտրելու հնարաւորութիւնը մենք ունենանք: Դա կը համարենք յաղթանակ: Կարող է այդ չորսի մէջ ոեւէ մէկը համարի, որ յաղթանակի չափը քիչ էր, բայց ես գտնում եմ, որ եթէ մենք կարողանանք դրան հասնել, դա նաեւ ոգեւորիչ կը լինի եւ քաղաքացիների համար, եւ ընդհանրապէս հետագայում քաղաքական գործունէութեան համար», - Մարտ 26-ին կայացած ասուլիսում յայտարարեց Խաչատրեանը:

Պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ հնարաւո՞ր է խորհրդարանական ընտրութիւնների օրինակով այս անգամ եւս ոչ իշխանական ուժերը միասնական շտաբ ձեւաւորեն, քաղաքապետի ընդդիմադիր թեկնածուն տեղեկացրեց, որ ՀԱԿ-ն արդէն իսկ աշխատում է այդ ուղղութեամբ:

«Մենք փորձում ենք դա անել, մենք ուզում ենք դա լինի, որովհետեւ միասնական ուժերի դէպքում մենք ունենք հնարաւորութիւն կանխելու այն ընտրախախտումները, որ կը լինեն տեղամասերում», - ասաց Խաչատրեանը:

Երեւանի աւագանու նախորդ ընտրութիւններում ՀԱԿ-ը յաղթահարեց անցողիկ շեմը, սակայն հրաժարուեց մանդատներից: «Մենք այն ժամանակ քաղաքական որոշում ենք ընդունել: Ես չեմ կարող ասել, որ մեր մասնակցութիւնը ինչ-որ առումով օգուտ կը բերէր՝ տեսնելով այն, ինչ կատարւում է Ազգային ժողովում, որտեղ այդ թւում եւ ՀԱԿ խմբակցութեան ելոյթները՝ որպէս ելոյթներ արձանագրուելուց բացի, իրական առումով որեւէ ընթացք չեն ստանում», - ասաց Խաչատրեանը:

## ԱՄԷՆ ԻՆՉ ՊԷՏՔ Է ԱՐՈՒԻ ՄԻՆՉԵՒ ԱՊՐԻԼԻ 9-Ը

«Այն, ինչ պատրաստւում է անել ժողովուրդը եւ Րաֆֆի Յովհաննիսեանը, պէտք է անի մինչեւ Ապրիլի 9-ը»,- Մարտ 26-ին Ազատութեան հրապարակում անցկացուող քաղաքացիական փորումի ժամանակ առաջարկեց «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութեան ղեկավար Պետրոս Մակէեանը: Նրա կարծիքով իշխանութիւնների եւ ժողովրդի միջեւ հնարաւոր է երկխօսութիւնները դրական ազդեցութիւն թողնեն, սակայն դա կը լինի միայն այն դէպքում, երբ այդ երկխօսութիւնը թելադրուած լինի ժողովրդի կողմից:

«Եթէ այդ երկխօսութիւնը չստացուի, ապա Ապրիլի 9-ը պէտք է դարձնել համազգային ընդվզման օր: Եթէ ժողովուրդը հանդիստ ընդունի որ իշխանութիւնների դէմ խաղ չկայ, ապա ամէն ինչ շատ բարդ կը լինի»,- կարծում է պարոն Մակէեանը:

Պետրոս Մակէեանը համար 2013թ. նախագահի ընտրութիւնները Հայաստանում անցկացուած նախորդ ընտրութիւններից տարբերւում են իրենց յետընտրական զարգացումներով: Ըստ նրա՝ ընտրութիւններին յաջորդող փուլը ոչ ստանդարտ էր թեկնածուի մարզեր կատարուած այցելութիւններով, ինչպէս նաեւ հացադուլով:

«Րաֆֆի Յովհաննիսեանի հացադուլ լուրջ ակցիա էր, որով մեսիջ էր տալիս հասարակութեանը, որ նրանք պէտք է իրենց ձայներին տէր կանգնեն»,- ասաց ԺՀԿ նախագահը:

Պետրոս Մակէեանը, պատմական ակնարկ կատարելով, յիշեցնում է՝ բացի 1991 թ. անցկացուած նախագահի առաջին ընտրութիւններից մնացած բոլոր ընտրութիւնների արդիւնքները կասկածելի են եղել:

«Միշտ յաղթել է ընդդիմադիր թեկնածուն, բայց իշխանութիւնները նորից իրենց ձեռքն են վերցրել իշխանութիւնը: Այսինքն չի կատարուել սահմանադրութիւն 2-րդ յօդուածի դրոյթները՝ ժողովրդի քուէով ձեւաւորուած իշխանութիւնը չեն յանձնել ժողովրդին»:

## ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԸ ՉԻ ԲԱՑԱՌՈՒՄ ՄԱՐՏԻ 1-Ի ԴԷՊՔԵՐԻ ԿՐԿՆՈՒԹԻՒՆԸ

Ինչի՞ հիման վրայ պէտք է ցրուի Հայաստանի խորհրդարանը, միայն այն պատճառով, որ «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը յայտարարել է իր յաղթանակի մասի՞ն. աշխարհում չկայ նման պրակտիկա: Այդ մասին, Մարտի 26-ին, կայացած մամուլի ասուլիսում յայտարարել է Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբեանը:

Նրա խօսքով, խորհրդարանական ընտրութիւնները կայացել են մէկ տարի առաջ, եւ Ազգային ժողովը, որտեղ ներկայացուած են ընդդիմադիր կուսակցութիւնները, նորմալ աշխատում են: Հայաստանի նախագահի ընտրութիւնները նոյնպէս կայացել են, եւ դրանց լեգիտիմութիւնը ճանաչել է ոչ միայն Սահմանադրական դատարանը, այլեւ աշխարհի շատ երկրներ: Ուստի, ըստ պատգամաւորի, արտահերթ ընտրութիւնների մասին խօսելը տրամաբանական չէ:

Հարցին, թէ ինչպէ՞ս է վերաբերւում «Ժառանգութեան» կողմից ստուերային կառավարութեան ձեւաւորման հնարաւորութեանը, Զոհրաբեանը պատասխանել է, թէ դա ինքնստինքեան արդէն բացասական երեւոյթ է: «Ստուերային կառավարութիւնը գաղտնի կառոյց է, որը պէտք է բացայայտել եւ պատժել: Քանի որ նրանք դեռ սահմանափակւում են հանրահաւաքներում իրենց խօսքի ազատութիւնն իրացնելով եւ արտայայտուելով, առայժմ խնդիր չկայ: Բայց եթէ խօսքից գործի անցնեն, ինչպէս դա եղաւ 2008թ. Մարտին, երբ քաղաքացիական անհնազանդութեան կոչեր էին հնչում, այդ դէպքերի համար կան ոստիկանութիւնը, Սահմանադրութիւնն ու օրէնքները: Հանրահաւաքները կարող են տարիներ ձգուել, դա իրենց իրաւունքն է: Մենք 2008թ. Մարտի 1-ի սցենար չենք գծում, սակայն եթէ ընդդիմութիւնն անցնի զինուած պայքարի, բնականաբար կառավարութիւնը թոյլ չի տայ կործանել դժուարութեամբ ստեղծուած պետութիւնը»,- նշել է նա:

## ԲՀԿ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ. «ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՆ ՈՒ ԻՐ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԸ ՈՉ ՄԻ ՍԽԱԼ ԲԱՆ ՉԵՆ ԱՆՈՒՄ»

Ներկայումս Հայաստանի ներքաղաքական կեանքում շօշափելի համաձայնութիւններ ձեռք չեն բերուել: Երկրում դեռ դիրքորոշումների համար պայքար է ընթանում: Այդ մասին Մամուլի ասուլիսում յայտարարել է «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան պատգամաւոր Լիովա Խաչատրեանը:

Նրա խօսքով, ի տարբերութիւն ընդդիմադիր նախորդ ներկայացուցիչների, նախագահի նախկին թեկնածու Րաֆֆի Յովհաննիսեանն ու իր կողմնակիցները ոչ մի սխալ բան չեն անում: «Նրանք հաւաքւում են Ազատութեան հրապարակում եւ խաղաղ հաւաքներ անում: Հետեւաբար, իշխանութիւնն ուժ կիրարելու որեւէ հիմք չունի»,- նկատել է Լիովա Խաչատրեանը՝ յաւելելով, թէ այսօրուայ դրութեամբ ժողովրդի ընտրութիւնը կանգ է առել Րաֆֆի Յովհաննիսեանի վրայ, թէեւ միանգամայն հնարաւոր է, որ ցանկացած պահի ժողովուրդը կարող է փոխել իր նախասիրութիւնները:

Խօսելով ԲՀԿ-ի կողմից վարչապետի հասցէին քննադատութիւնների մասին՝ նա ընդգծել է, թէ «Բարգաւաճ Հայաստանի» քաղաքականութիւնը տնտեսական ոլորտում միտուած է աշխատատեղերի ստեղծմանը եւ արտագաղթի դադարեցմանը: «Այն դէպքում, երբ խաղի կանոնները չեն փոխւում, մենք ստիպուած ենք պայքարել առկայ կանոններով, քանի որ մեզ անհրաժեշտ է ինչ-որ կերպ իրացնել մեր քաղաքական ծրագրերը»,- ասել է պատգամաւորը՝ ընդգծելով, թէ խորհրդարանական ընտրութիւնները ցոյց տուեցին, որ ընտրական օրէնսգրքում գոյութիւն ունեն որոշակի թերութիւններ, որոնք անհրաժեշտ է ուղղել:

# ԼՈՒՐԵՐ

## «ԷԿՈՆՈՄԻՍՏ». ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ 114-ՐԴ

«2012-ին ժողովրդավարութեան մակարդակով Հայաստանը աշխարհի 165 պետութիւնների շարքում 114-րդ տեղում էր», - իրենց տարեկան՝ թիւով հինգերորդ զեկոյցում նշում են լոնդոնեան «Էկոնոմիստ» հանդէսի հետազօտական յաւելուածի վերլուծաբանները:

Զեկոյցից պարզ է դառնում, որ Հայաստանը ինչպէս եւ նախորդ տարիներին, այսօր էլ «հիբրիդային պետութիւնների» թւում է՝ ժողովրդավարութեան մակարդակով գտնուելով մօտաւորապէս նոյն մակարդակի վրայ, ինչ Նեպալը, Իրաքը կամ Հայիթին:

Նշենք, որ «Էկոնոմիստ»-ի վերլուծաբանները պետութիւնների ժողովրդավարութեան մակարդակը գնահատում են 10 բալանոց սանդղակով: Բրիտանացի վերլուծաբանների հաշուարկի համաձայն, Հայաստանի արձանագրած միջին ցուցանիշը 2008 թուականից ի վեր չի փոխուել. այն կազմում է 4.09 միաւոր:

Ամենացածր ցուցանիշները քաղաքական մշակոյթի ընդհանուր վիճակին են վերաբերում: Այս ցուցանիշով, ըստ «Էկոնոմիստ»-ի մասնագէտների, Հայաստանը նոյն մակարդակի վրայ է, ինչ աֆրիկեան մի շարք պետութիւններ՝ ասենք, Մալին, Նիգերիան կամ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետութիւնը: Փոխարէնը այս նոյն ցուցանիշով Հայաստանն առաջ է անցել Ռուսաստանից, որտեղ քաղաքական մշակոյթի մակարդակը զգալիօրէն աւելի ցածր է, քան Հարաւային Կովկասում կամ Ուկրաինայում: Ցածր են նաեւ Հայաստանում արձանագրուած ցուցանիշները կառավարման արդիւնաւէտութեան մակարդակի առումով:

Ինչ վերաբերում է ընտրական պրոցէսներին, ապա դրանք արժանացել են բրիտանացի վերլուծաբանների ընդամէնը 4.33 գնահատականին՝ տասը հնարաւորից:

«Հայաստանի նման արդիւնքը համադրելի է Սինգապուրի, Իրաքի կամ Լիբիայի արձանագրած ցուցանիշների հետ», - պարզ է դառնում «Էկոնոմիստ»-ի մասնագէտների հրապարակած զեկոյցից:

Փաստաթղթի հեղինակների կարծիքով, միակ ոլորտը, որտեղ Հայաստանում իրավիճակը քիչ թէ շատ բարւոք է, քաղաքացիական ազատութիւնները մակարդակն է, որը զեկոյցի հեղինակների կողմից գնահատւում է 6 միաւորից փոքր ինչ պակաս: Սա համադրելի է ասենք Վենեսուելայում քաղաքացիական ազատութիւնների մակարդակի հետ:

Ինչ վերաբերում է Հայաստանի հարեւաններին, ապա Վրաստանը այս տարի զգալի առաջընթաց է արձանարգել՝ 2011 թուականի 102-րդ տեղից տեղափոխուելով 93-րդ հորիզոնականը: Նման ցատկի գլխաւոր պատճառը վրացական ընդդիմութեան յաղթանակն էր նախորդ տարուայ Հոկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրութիւններում: Եթէ 2011 թուականի զեկոյցում Վրաստանում ընտրական պրոցէսների ընդհանուր վիճակը «Էկոնոմիստ»-ի վերլուծաբանները գնահատում էին 7 միաւորից էլ քիչ, ապա այժմ այդ ցուցանիշն աճել է՝ հասնելով 8.52-ի: Նշենք, որ ընտրական պրոցէսների մօտաւորապէս նոյնարժէք ցուցանիշ է առկայ ընտրական ժողովրդավարութեան շատ աւելի պատկառելի փորձ ունեցող այնպիսի պետութիւններում, ինչպիսիք են Արգենտինան կամ Մեքսիկան: Չնայած այս առաջընթացին՝ Վրաստանը, Հայաստանի հետ մեկտեղ, շարունակում է մնալ «հիբրիդային պետութիւնների» խմբում:

Իսկ մեր միւս հարեւան պետութիւնը՝ Ադրբեջանը, աւտորիտար վարչակազմ ունեցող պետութիւնների խմբում է: Ադրբեջանն արձանագրած գրեթէ բոլոր ցուցանիշներով զիջում է հարեւան երկրներին:

Աւտորիտար պետութիւնների խմբին է դասուել նաեւ Ռուսաստանը: «Այս երկրի գլխաւոր խնդիրներն են կառավարաման անարդիւնաւէտութիւնն ու քաղաքական մշակոյթի ցածր մակարդակը», - նշում են «Էկոնոմիստ»-ի վերլուծական յաւելուածի փոր-

## ՀԱՅԵՐԻ 60 ՏՈԿՈՍԸ ՎՍՏԱՀ Է, ՈՐ «ՎԱՏ ՕՐԵՐԸ» ԴԵՌ ԱՌՋԵՒՈՒՄ ԵՆ

Հայաստանում մարդիկ շատ աւելի գոհ են իրենց կեանքից, քան Եւրոպական հարեւանութեան եւ գործընկերութեան միւս 6 երկրներում:

Եւրամիութիւնը հարցումներ է անցկացրել Եւրոպական հարեւանութեան եւ գործընկերութեան 7 երկրներում ՝ Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Բելառուսում, Մոլդովայում, Ուկրաինայում եւ Ռուսաստանում՝ պարզելու քաղաքացիների տրամադրութիւնները առկայ իրավիճակի եւ սպասելիքների հետ կապուած:

ԵՄ Հարեւանութեան բարոմետրը փաստում է, որ հարցմանը մասնակցած Հայաստանի քաղաքացիների 67 տոկոսը լիովին գոհ են իրենց կեանքից, մինչդեռ հետազօտութեան մէջ ներառուած միւս երկրներում այս ցուցանիշը չի գերազանցում 47 տոկոսը:

Փոխարէնը՝ հայաստանցիների 61 տոկոսը վստահ է, որ երկրում գործընթացները սխալ ուղղութեամբ են գնում, մինչդեռ հարեւանութեան միւս 6 երկրներում այդպէս է կարծում միայն բնակչութեան 41 տոկոսը:

Հայաստանցիների վերաբերմունքը ԵՄ նոյնպէս ամենաբարձրն է հարեւանութեան միւս երկրների համեմատութեամբ: Համաձայն ԵՄ հարեւանութեան բարոմետրի՝ հարցուածների շուրջ 90 տոկոսը ԵՄ համարում է Հայաստանի կարեւոր գործընկեր, շուրջ 70 տոկոսը կիսում է եւրոպական արժէքները ու վստահում եւրոպական բարեփոխումներին: Հայաստանում 2 անգամ աւելի հարցուածներ են համարում, որ ԵՄ հետ յարաբերութիւնները լաւն են:

«Հայաստանում անցկացուած հարցումների արդիւնքներով պարզուել է, որ Հայաստանը ԵՄ համարում է կարեւոր գործընկեր եւ կը ցանկանար, որ նրա հետ կապերը գնալով սերտանային եւ որ ԵՄ աւելի մեծ դեր խաղար բարեփոխումների անցկացման հարցում», - ասում է Հայաստանում ԵՄ պատուիրակութեան ղեկավար, դեսպան Տրաեան Հրիսթեան:

Ինչ վերաբերում է տնտեսական ներկայ իրավիճակին, աշխատանքային եւ ընտանեկան դրութեանը, ապա հայաստանցիների պատկերացումները շատ չեն տարբերւում միւս երկրների բնակիչներից: Նրանք բոլորն էլ հիմնականում դժգոհ են իրենց երկրի տնտեսական իրավիճակից: Տնտեսական ճգնաժամի հետեւանքների հետ կապուած հայաստանցիները բոլորից վատատես են. հայերի շուրջ 60 տոկոսը վստահ է, որ «վատ օրերը» դեռ առջեւում են՝ փաստում է ԵՄ հարեւանութեան բարոմետրը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԵՐՔԵԼ Է ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը հերքել է ադրբեջանական լրատուամիջոցների տեղեկութիւնները իբր տեղի ունեցած փոխհրաձգութեան մասին:

«Տեղեկութիւնը չի համապատասխանում իրականութեանը: Դա սուտ է: Հայկական կողմը հաւատարիմ է հրադադարի ռեժիմի պահպանմանը»,- NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտարարել է Հայաստանի պաշտպանութեան նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Յովհաննիսեանը:

Նշենք, որ ադրբեջանական APA գործակալութիւնը տեղեկութիւն էր տարածել, իբր փոխհրաձգութիւն է եղել եւ երկու կողմից էլ զինծառայողներ են զոհուել: Մասնաւորապէս, հաղորդւում էր, թէ զոհուել է ժամկէտային զինծառայող Մեհման Սադիգովը:

Տուեալները, սակայն, դեռ չի հաստատել Ադրբեջանի պաշտպանութեան նախարարութիւնը: Ադրբեջանցի զինծառայողի մահուան վայրը եւս չի նշւում: Այդ ամէնը հիմք է տալիս կարծելու, որ ադրբեջանական կողմը հերթական անգամ փոխհրաձգութեանն է փորձում վերագերել դժբախտ պատահարի կամ ոչ կանոնադրական յարաբերութիւնների պատճառով զինուորի մահուան դէպքը:

## ՍԱՐԳՍԵԱՆ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Շարունակուածէջ 1-էն

իականութիւնը»:

Արզումանեան նաեւ շեշտած կը շեշտէր, որ նախագահի հանդիպումները կը կազմակերպուին նախօրոք ծրագրուած արարողակարգով, նախապէս որոշուած ժամերուն եւ տեղի կ'ունենան նախագահական նստավայրին մէջ:

Մարտ 27-ին, Յովհաննիսեան Ազատութեան հրապարակի վրայ յայտարարեց, որ ինք միայն նախագահին եւ կաթողիկոսին կը պատասխանէ եւ «խեղաթիւրուած» որակեց նախագահի խօսնակի որոշ շեշտադրումները, յայտնելով, որ իրենց առաջարկը կը մնայ ուժի մէջ:

Իր առաջարկներու վերաբերեալ Րաֆֆի Յովհաննիսեան Մարտ 27-ին մանրամասն խօսեցաւ Ազատութեան հրապարակին վրայ կայացած բացօթեայ ասուլիսի ժամանակ: «Ժառանգութեան» առաջնորդը նախագահի ինքնաբացարկի, կամ արտահերթ համամասնական ընտրակարգով խորհրդարանական ընտրութիւններ կազմակերպելու, ընտրակեղծարար պաշտօնեաներուն պատժելու եւ պաշտօններ զիջելու առաջարկները նկատեց նուազագոյնը, որու շուրջ կրնայ երկխօսութիւն ունենալ Սերժ Սարգսեանի հետ: Ան նաեւ ըսաւ, որ եթէ գործող նախագահը որոշէ որեւէ կէտ հանել, ապա անոր համարժէք կէտ պէտք է աւելցուի: Յովհաննիսեան վերահաստատեց, մինչեւ այս հանգրուանի աւարտը Ազատութեան հրապարակէն դուրս չգալու իր որոշումը՝ այդ հրապարակը շարունակելով նկատել Սերժ Սարգսեանի հետ հանդիպման վայրը:

«Ես ինքս կ'որոշեմ, թէ երբ կ'անցնենք յաջորդ հանգրուան, որպէսզի կարողանանք ժողովրդի Փետրուարի 18-ի աննախադէպ յաղթանակը արձանագրել տալ: Մի բան կարող եմ ասել՝ այն համալիր հանգուցալուծումը, որ ուղարկեցի պարոն Սարգսեանին, անբաժանելի է: Այնպէս, որ եթէ երբեւէ պարոն Սարգսեանը ուզենայ դէմ առ դէմ հանդիպել, պէտք է նկատի առնուի, որ ինչ ուղարկուեց, դա մեր նուազագոյն չէմն է: Դա չի նշանակում, որ ինքը չի կարող առաջարկել ինչ-որ մի կէտ հանել, բայց եթէ մի կէտ հանեց, պէտք է համարժէք կէտը աւելացնի», - յայտարարեց Յովհաննիսեան:

Միւս կողմէ, ստեղծուած կացութեան մասին իր կարծիքը յայտնելով Ռազմավարական եւ Ազգային Հետազօտութիւններու հայկական կեդրոնի փորձագէտ Էդգար Վարդանեան յայտնեց, որ Սարգսեան-Յովհաննիսեան հանդիպումը բացառուած չէ: Սակայն, այդ հանդիպումը նաեւ համաձայնութեան երաշխիք չէ: Վարդանեանի կարծիքով՝ ընդդիմութիւնը չի հեռանար հրապարակէն եւ իր նպատակներուն կը փորձէ հասնիլ հասարակական ճնշման աստիճանական ուժեղացման շնորհիւ: Եւ այդ պարագային իշխանութիւնները հարկադրուած կ'ըլլան աւելի մեծ զիջումներ կատարել. - «Ես կարծում եմ, որ ընդդիմութիւնը, Րաֆֆի Յովհաննիսեանը չի հեռանար Ազատութեան հրապարակից, մինչեւ որ չստորագրուի այդ փաստաթղթի տակ: Այսինքն՝ մինչեւ որ այդ փաստաթուղթը չլինի, եւ ստորագրութիւններ չլինեն: Կարծում եմ, որ մինչեւ Ապրիլի 9-ը հաւանական է, որ հանդիպում լինի: Նաեւ, հնարաւոր է, որ երկու նամակ էլ լինի. Սերժ Սարգսեանը պէտք է պատասխանի Րաֆֆի Յովհաննիսեանի այս նամակին, նաեւ այս ասուլիսին, եւ ի պատասխան այդ նամակին Րաֆֆի Յովհաննիսեանը պէտք է յայտարարութիւն անի, նաեւ բաց նամակի միջոցով, հաւանաբար, դա արուի: Դրանից յետոյ արդէն, ինձ թւում է, այդ նամակների բովանդակութիւնը պէտք է վերաբերի նաեւ հանդիպմանը»,- ըսաւ Էդգար Վարդանեան:

# ՀԱՅՑ. ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ԶԱՏԿՈՒԱՅ ՊԱՏԳԱՄԸ

Յիսուս Քրիստոսի հրաշափառ յարութիւնը Քրիստոնէական կրօնին հիմնաքարն է:

Եկեղեցին հիմնուած է յարութեան դէպքին վրայ: Քրիստոսի յարութեան նշանակութիւնը ի յայտ կու գայ հետեւեալ իրողութիւններուն մէջ.-

Առաջին, Քրիտոսի յարութիւնը հաւաստիքն է յաւիտենական կեանքի: Քրիստոնեայ եկեղեցին Քրիստոսի յարութեամբ կը շեփորէ անմեռ եւ անմար կեանքի յոյսը: Ան կու գայ վկայելու թէ կեանքը սոսկ աստենական չէ, այլ նաեւ անդենական է: Ան կու գայ յայտարարելու թէ Քրիստոս իր յարութեամբ մահը խափանեց եւ մարդոց յաւիտենական կեանք պարգեւեց:

Յարուցեալ Քրիստոս իրեն հաւատացողներուն յաւիտենական կեանք կը շնորհէ: Կեանքը Քրիստոսի կառքին կապող քրիստոնեային համար՝ մահը ուրիշ բան չէ եթէ ոչ երկրէն երկինք փոխադրութիւն մը, երթ մը՝ դէպի յաւիտենական տուն:

Երկրորդ, Քրիստոսի յարութիւնը աշխարհածաւալ քրիստոնէութեան անսասան խարիսխը դարձաւ: Անտարակոյս, Բեթլեհէմի մսուրին խոնարհութիւնը, Յորդանանի մէջ մկրտութեամբ:

Յիսուսի սկսած առաքելութիւնը, իր քարոզած յաւիտենական ճշմարտութիւնները, իր կատարած գերմարդկային հրաշքները, Գողգոթայի Խաչին վրայ իր ցուցաբերած ներողամտութիւնը իրենց անջնջելի տպաւորութիւնները թողուցին աշակերտներուն կեանքին վրայ: Սակայն, ասոնցմէ ոչ մէկը, եւ նոյնիսկ ասոնց բոլորը միատեղ, չէին կրնար փոխարինել Քրիստոսի յարութիւնը, որուն վրայ կառուցուեցաւ Քրիստոնէութիւնը: Յարութիւնը եկաւ վկայելու թէ Յիսուս իրօք մարմնացեալ Աստուած էր, որ իր մահուամբ եւ յարութեամբ փրկեց մարդ արարածը իր մեղսալի կեանքէն:

Երրորդ, Քրիստոսի յարութիւնը հիմնովին յեղաշրջեց իր աշակերտներուն եւ համակիրներուն կեանքը: Յիսուսի աշակերտներուն եւ առաջին հետեւորդներուն համար Խաչելութեան Ուրբաթ օրը դառն ու դաժան օր մըն էր: Այդ քստմնելի օրը հաւանաբար անոնք սկսան մտածել թէ իրենք չարաչար խաբուած էին իրենց կեանքը կապելով մէկու մը, որ անարգ խաչի մահով՝ իր կեանքը կը վերջացնէր: Բայց Խաչելութեան երրորդ օրուան յաջորդող յարութեան հրաշքը արմատական փոփոխութիւն մը բերաւ իրենց կեանքին ու կենցաղին մէջ: Զատկուան հրաշքը նոր յոյս եւ ներոյժ ներշնչեց անոնց եւ հոգեկան կազդոյրի եւ յաղթանակի նոր հեռանկարներ բացաւ իրենց առջեւ:

Չորրորդ, Քրիստոսի յարութիւնը կու գայ հաստատել այն իրողութիւնը, որ ինչպէս անցեալին, ներկայիս ալ Քրիստոս յաղթական Տէր է: Յիսուս Քրիստոս, ինչպէս 20 դարեր առաջ Պաղեստինի մէջ մարդոց ցաւերը կը դարմանէր, մեղքերը կը ներէր, հոգիները կը փրկէր, այսօր ալ նոյն բաները կարող է ընել, եւ արդէն կ՛ընէ, բոլոր անոնց, որոնք կը հաւատան իրեն եւ իրենց կեանքերը յանձնած են Իրեն: Այսպիսիներ, Պօղոս Առաքեալի պէս կրնան ըսել, «Ես կ՛ապրիմ, բայց ոչ թէ ես, այլ Քրիստոս կ՛ապրի իմ մէջս«: Բոլոր դարերու ճշմարիտ քրիստոնեաներու վկայութիւնն է ասիկա: Արդարեւ, Քրիստոսի յարութեան պատգամն է, որ քանի որ Ինք յաւէտ յաղթող Տէր է, իրմով բոլոր ճշմարիտ քրիստոնեաները յաղթական կեանք կ՛ապրին:

Իցի՜ւ թէ յարութեան տօնը բոլոր մարդոց համար դառնար հոգեւոր վերածնունդի առիթ մը, որպէս զի կարենային, բանիւ թէ կեանքով վկայել, »Քրիստոս յարեաւ ի մեռելոց, փառք յարութեան քո՛, Տէր»:

Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեան
Գործադիր Տնօրէն, Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի

# ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՔԱՐՈԶԸ

Շարունակուած էջ 1–էն

արմատացուցած են նորին տեսիլքը. «Քրիստոսի Յարութիւնը պէտք է մեր մէջ վերածուի անսպառ այն հոգեկան ույժին, որ խաւարին մէջ լոյս կը ծագեցնէ, անձկութեան մէջ լոյս կը ներշնչէ, վախին ու կասկածին դիմաց հաւատքով կը զօտեպնդէ, երջանկութեան մէջ համեստութիւն կը խառնէ, անձնական շահին մէջ ուրիշին շահն ալ կը ներառնէ, մէկ խօսքով՝ ամէն բանի մէջ սիրոյ զօրութեամբ մեզ կը տոգորէ եւ անմահութեան տենչով ու տեսիլքով կը վառէ» (Գարեգին Ա):

Քրիստոսի Յարութիւնը խաւարին մէջ ծնունդ առնող լոյսն է: Քրիստոսի կեանքը դարձնենք հայելին մեր կեանքին, որպէսզի իրեն հետ դէպի խաչը բարձրացող կեանքը հասցնենք Յարութեան բարձունքին ու մերժենք խաւարները մեր կեանքին:

Քրիստոսի Յարութիւնը անձկութեան մէջ ճառագայթող լոյսն է, որուն արմատը իւրաքանչիւրիս էութեան մէջ խորացած է: Աղօթքի զօրութեամբ ջուր տանք լոյսին, որպէսզի Յոյսին խորհուրդը դարձնենք մեր կեանքը:

Քրիստոսի Յարութիւնը՝ վախին ու կասկածին տուն տուող ալիքները իր մէջ խորտակող սաստն է: Ամէն անգամ, երբ մեր մարդկային էութիւնը հեռու է աստուածային տանող ճանապարհէն, ապա մեր հայեացքն ուղղենք դէպի Երկինք, որուն անսահմանութեան մէջ տարածուած է Յարութեան լոյսը մեր Տիրոջ:

Քրիստոսի Յարութիւնը իւրաքանչիւրիս կեանքին մէջ ներթափանցող աստուածային սէրն է, որ կը մերժէ մարդկային ամէն տկարութիւն, որպէսզի մեր քայլերն համընթաց ուղղենք Մեծ Վարդապետին քայլած ճանապարհին:

Քրիստոսի Յարութեան խորհուրդով ապրուած ամէն մի կեանք իր մէջ կը գտնէ Աստուծոյ ներկայութիւնը, իր հոգիին խորքին կը տեսնէ մանրակերտը Եկեղեցւոյ: Եկեղեցին՝ անժամանցելի գերագոյն ճշմարտութիւնն է մարդկութեան պատմութեան ու կեանքին մէջ: Այս սրբութեան հետ մրցակիցներ չեն կրնար ըլլալ: Աստուած եւ աստուածներու թատերաբեմն է կեանքը, որուն պատկերին մէջ դերակատարներն ենք մենք բոլորս: Եթէ երբեք մեր կեանքն Աստուծոյ հետ է, ապա յաւերժի ճամբորդներն ենք ու Քրիստոսի Յարութեան խորհուրդին ճառագայթները կը դարձնենք մեր կեանքերը:

Քրիստոսի Յարութեան ճշմարիտ պատկերն է նաեւ մեր ազգին կեանքը, որ մոխիրներուն մէջէն ապրեցաւ իր նոր Ծնունդը, քանզի մեր նահատակները իրենց հոգիներուն մէջ ամրօրէն պահեցին Յարութեան խորհուրդը, որպէս «անկէզ մորենին»՝ նոր կեանքի ճանապարհը, ոսկեայ կամուրջ դէպի նորանկախացեալ Հայաստան, որուն նուիրագործուած հողէն դէպի Երկինք բարձրացող Սուրբ Էջմիածինը դարձաւ կրակը այն հերոսներուն, որոնք Միածնաէջ Խորանի կանթեղին լոյսովը ստացան պատգամը Սարդարապատի յաղթանակին, ու իրենց արեան կանչը վերածեցին նոր արշալոյսներու Յոյսին նորահաս սերունդներու հոգիներուն մէջ:

«Տեսաք զՏէր»: Յարութեան խորհուրդը տօնախմբենք, որպէսզի ապրինք նոր կեանքով, նոր յոյսերով, նոր եռանդով ու հաւատքով, որպէսզի դառնանք նոր ժամանակներու առաքեալները մեր ժողովուրդի զաւակաց համար, եւ անոնց հոգիին ու կեանքին մէջ նոր արձագանգ դառնայ Քրիստոսի առաքեալներու պատգամը. «Տեսաք զՏէր»:

«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»:

«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ
Սուրբ Զատիկ 2013

# Ս.Դ.Հ.Կ. ՎԱՐԻՉ ՄԱՐՄՆԻ ԱՅՑԸ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵԴՐՈՆԸ



Հինգշաբթի, Մարտ 21ին, 2013, Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը ներկայացնող պատուիրակութիւն մը՝ իր անդրանիկ այցելութիւնը տուաւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Կլէնտէյլի Նոր Կեդրոնատեղին: Պատուիրակութիւնը կը գլխաւորէր Վարիչ Մարմնի ատենապետ՝ Ընկ. Գաբրիէլ Մոլոյեան, որուն մաս կը կազմէին ընկերներ Վարդան Քէօրօղլեան, Կէրի Սինանեան եւ Լենա Մանուկեան: Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան տնօրէն Վեր. Ծօ Մաթոսեան եւ Հայ Աւետ. Համայնքի ղեկավարներէն Վեր. Պերճ Ճամպազեան, պատուելիներ՝ Հենրիկ Շահնազարեան, Հերըլտ Տէրմինճեան եւ դոկտ. Վահէ Նալպանտեան սիրալիր ջերմ ընդունելութեամբ դիմաւորեցին Ս.Դ.Հ.Կ.ի ներկայացուցիչները: Շուրջ մէկ ու կէս ժամ տեւող այս հանդիպման ընթացքին շահեկան տեղեկութիւններ փոխանակուեցան զոյգ կազմակերպութեանց տարբեր կառոյցներու գործունէութեանց մասին թէ՛ սփիւռքի եւ թէ՛ մայր հայրենիքէն ներս: Լուսարձակի տակ առնուեցան նաեւ հայ ժողովուրդը յուզող այժմէական հարցերը, մասնաւորաբար՝ Միջին Արեւելքի խիստ անապահով վիճակն ու հայահոծ գաղութներուն սպառնացող վտանգն ու այս կապակցութեամբ նախաձեռնուած օգնութեան միջոցառումները:

Միջ-համայնքային գործակցութիւնն առաւել եւս ամրապնդելու ցանկութեամբ եւ յառաջիկայ տօնական օրերու բարեմաղթութիւններով վերջ գտաւ սոյն շահեկան հանդիպումը:




HayastanInfo.net

# ՕՐՕՐՈՑԱՅԻՆԸ ՍԳԵՐԳԻՑ ԱՒԵԼԻ ԱՍՏՈՒԱԾԱՀԱՃՈՅ Է

ՍԱՄՈՒԷԼ ԿՈՍԵԱՆ

Թէեւ յետընտրական միտինգային մարաթոնի 20-օրեայ ընթացքին, այն այդպէս էլ արագութիւն չի հաւաքում եւ շարունակում է իր տեղապտոյտները:

Կտրուկ գործողութիւնները բացառելու դէպքում, ինչի կողմնակիցն է նաեւ Րաֆֆի Յովհաննիսեանը, դժուար է պատկերացնել, թէ ինչը կարող է ընդդիմութեան գործողութիւններին արագութիւն հաղորդել:

Ոմանց կարծիքով, հարցի դրական վերջնագիծը պայմանաւորուած է իշխանութիւն-ընդդիմութիւն երկխօսութեամբ: Համաձայնութեան գալու դէպքում սա, թերեւս, լաւագոյն տարբերակը կը լինէր, որը նուազագոյն ցնցումներով երկիրը դուրս կը բերէր ճգնաժամից: Սակայն երկխօսութիւնը սկսելու Րաֆֆի Յովհաննիսեանի նախապայմանը, որպէսզի Սերժ Սարգսեանն այցելի Ազատութեան հրապարակ, կարծես այնքան էլ իրատեսական չէ: «Ժառանգութեան» առաջնորդին վերջերս այցելած ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանն էլ չկարողացաւ պատասխանել՝ Սերժ Սարգսեանը կը գա՞յ հրապարակ, թէ՞ չէ: Այնուհետեւ, գնահատելով Րաֆֆի Յովհաննիսեանի պահանջների ողջամտութիւնը, Յովիկ Աբրահամեանը նախագահական ընտրութիւնների 2-րդ փուլի առաջարկը ողջամիտ չհամարեց: Ազգային ժողովի արձակման եւ արտահերթ ընտրութիւնների կազմակերպման մասին էլ ասաց, որ «ձեւը չի տեսնում», յաւելելով, որ այն նոյնպէս ողջամիտ չէ:

Ստացւում է՝ ամենամեծ ցանկութեան դէպքում էլ իշխանութիւն-ընդդիմութիւն երկխօսութիւնը հազիւ թէ կողմերին ընդհանուր յայտարարի բերի, քանի որ Յովհաննիսեանի համարեա՛ բոլոր առաջարկներն էլ իշխանութեան համար ընդունելի չեն: Ինչ վերաբերում է նրան, որ Սերժ Սարգսեանը կարող է իշխանութիւնը ինքնակամ յանձնել ընդդիմութեանը, ապա աբսուրդի պարագայում էլ դա դժուար է պատկերացնել: Անհաւատալի է նաեւ, որ գերտէրութիւնների ղեկավարները կարող են ներողութիւն խնդրել վերընտրուելու կապակցութեամբ Սերժ Սարգսեանին ժամանակից շուտ շնորհաւորելու համար: Այնպէս որ, Յովհաննիսեանի՝ նրանց հասցէին ուղղուած մեղադրանքներն աւելի զգայական դաշտից են: Նման պարագայում քաղաքական մի շարք գործիչներ փորձում են իրենց առաջարկները ներկայացնել, սակայն փաստն այն է, որ հիմնական դերակատար Րաֆֆի Յովհաննիսեանը, պայքարի շարունակութեան ձեւ ընտրելով հացադուլը, աւելի է նեղացրել առաւել յաղթական արդիւնքներ ապահովող հնարաւորութիւնների դաշտը: Ընդհանրապէս, իւրաքանչիւր պայքարի ռազմավարութիւն, անկախ ուժերի յարաբերակցութիւնից, յաղթանակի ակնկալութեան հետ միաժամանակ, պարտաւոր է ծրագրաւորել նաեւ բարեյաջող նահանջի հնարաւորութիւնը, քանի որ, ինչպէս ռազմի դաշտում, քաղաքականութեան մէջ նոյնպէս երաշխաւորուած յաղթանակներ չեն լինում: Միւս կողմից էլ, պէտք չէ այդքան շահարկել ժողովրդի գործօնը: Եթէ ընդդիմութեանը ձայն տուածները ժողովուրդ են, ապա Սերժ Սարգսեանին ընտրածները կարող են մտածել, որ խօսքն իրենց չի վերաբերում, թէեւ բոլոր քաղաքական գործիչներն էլ այս պարագայում իրենց համարում են բոլորի ընտրեալը: Ինչեւիցէ, փաստն այն է, որ այսպէս շարունակել չի կարելի: Վերոնշեալ հանդիպմանը Յովիկ Աբրահամեանը ասել է, որ ինքն էլ է մտահոգ, «Որպէսզի այն խնդիրները եւ դժգոհութիւնները, որ կան Ազատութեան հրապարակում, թէ՛ տնտեսական, թէ՛ քաղաքական, թէ՛ սոցիալական, պէտք է լուծում գտնեն»: Ի՞նչն էր խանգարում, որ մինչեւ դանակը ոսկորին հասնելը այդ հարցերին, գոնէ հնարաւորութեան սահմաններում, լուծումներ տրուէին: Այդ դէպքում ժողովրդական դժգոհութեան ալիքը գուցէ այս ուժգնութիւնը չունենար: Այն տպաւորութիւնն է, թէ իշխանութիւնն այնքան էլ տեղեկացուած չէ ժողովրդի կեանքի իրողութիւններից, եւ ինչ-որ տեղ ինքն էլ է զարմացած ու հիասթափուած ընտրութիւնների արդիւնքներից: Սակայն մի բան անառարկելի է, որ ներքաղաքական այսօրինակ հակամարտութիւնները աղերսներ չունեն ժողովրդի շահերի հետ:

Պարզապէս պիտի ապաւինել այն իմաստնութեանը, որ նոյն ժողովրդի ներսում երկխօսութեան համար փակուղիներ չեն լինում: Եւ պէտք չէ ծայրայեղ միջոցների դիմել, որպէսզի քո ժողովրդի մէջ քեզ լսող լինի: Առաւել ագրեսիւ տրամադրուածներին այս խօսքերը գուցէ օրօրոցային թուան: Սակայն հակառակ պարագայում էլ արդիւնքը միայն կորուստներն են լինելու: Րաֆֆի Յովհաննիսեանը երբ յայտարարում է, որ Սերժ Սարգսեանի երդմնակալութիւնը կը լինի միայն իր դիակի վրայով, առաւել ցանկալի է, որ նա իր կեանքի գնով կարողանայ հաշտութեան երկխօսութիւնը ապահովել: Չէ՞ որ օրօրոցայինը միշտ էլ սգերգից աւելի աստուածահաճոյ է:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐԸ

ԷՐԻԿ ՆՐԻՑԵԱՆ

Մարդիկ սիրում են շատ խօսել Հայաստանում առկայ խնդիրների մասին եւ ամպագոռգոռ յայտարարութիւններ անել դրանց վերաբերեալ՝ փորձելով ինչ-ինչ լուծումներ առաջարկել երբեմն այնպիսի մասշտաբային խնդիրների, որոնք ենթակայ են լուրջ վերլուծութիւնների եւ պահանջում են երկարատեւ գործընթացներ մինչեւ վերջնական հանգուցալուծում: Մինչդեռ մենք այնքան աւելի պարզ, բայց միեւնոյն ժամանակ ուշագրաւ առօրեական խնդիրներ ունենք, որոնք շատ աւելի ցաւալի, տանջալի եւ ողբերգական են...

Մի քանի օր առաջ փողոցում քայլելիս ինձ մօտեցաւ 3-4 տարեկան մի աղջնակ եւ խնդրեց օգնել՝ մի փոքր գումար տրամադրելով: Թերեւս միայն Աստծուն է յայտնի, թէ ինչ կատարուեց ներսումս այդ րոպէին. հոգուս խորքում ջղայնութեան եւ կարեկցանքի զգացողութիւնները միախառնուեցին, եւ ես անմիջապէս հարցրեցի, թէ որտեղ են փոքրիկի ծնողները: Վերջինս ինձ անգիր արած նախադասութիւնների շարան ասելուց յետոյ, ցոյց տուեց իր միակ հարազատին՝ «տատիկին»: Ես մօտեցայ կնոջը եւ հարցրեցի, թէ ինչու է նա երեխային ստիպում, որ վերջինս փող մուրայ: Այդ տարեց կինը, ինձ կոպտօրէն պատասխանեց, թէ իբր երեխան իր «վիրահատութեան գումարն է փորձում հաւաքել»՝ գետնին ցոյց տալով ինչ-որ արեան հետքեր վերագրելով երեխային: Յետոյ ասաց, որ նրանք տուն չունեն, եւ այս երեխան հինգ երեխաներից մէկն է: Անկեղծ ասած այդ րոպէին իմ ջղայնութեան զգացողութիւնը պարզապէս կրկնապատկուեց եւ ես, փորձելով պահպանել հաւասարակշռութիւնս, մի փոքր աւելի կոշտ, բայց ցածր տոնով ասացի, որ երեխային փողոցում ցրտին մատնելով, ստիպելով, որ փող մուրայ անցորդներից, դրանից աղջնակի առողջական վիճակը բնաւ չի լաւանայ եւ վիրահատութեան գումար էլ չի հաւաքուի: Աւելի լաւ կը լինի երեխային տանի մանկատուն, պետպատուէրի միջոցով կազմակերպի փոքրիկի վիրահատութիւնը, պարբերաբար այցելի նրան եւ երբ հնարաւորութիւնը ների, գնայ եւ վերադարձնի «տուն»: Ի պատասխան՝ այս կինը սկսեց բորբոքուել եւ ձայնի տոնայնութիւնը կամաց-կամաց բարձրացնել՝ ասելով, որ երեխային վերջերս է մանկատնից «հանել» եւ լսել անգամ չի ուզում այդ մասին եւ ինձ «խնդրեց» որ հեռանամ:

Ես հեռացայ...

Հեռացայ, բայց մի ամբողջ գիշեր չքնեցի եւ տանջուեցի այն մտքից, որ այդ երեխան ոչ առաջինն է, ոչ էլ առաւել եւս վերջինը: Միայն Երեւանում, եւ միայն կենտրոնում, ամէն օր կարելի է տեսնել բազմաթիւ երեխաների, որոնք արժանացած են նմանատիպ դառը եւ անարդար ճակատագրի: Մէկին ստիպում են ծաղիկ վաճառի, միւսին Աստուած գիտէ թէ ինչ, իսկ մէկ ուրիշին պարզապէս զբաղուել դասական մուրացկանութեամբ՝ ձեռքը պարզելով փող խնդրել անցորդներից: Սա այն դաժան իրականութիւնն է, որի կողքով մենք երբեմն անտարբեր, երբեմն էլ պարզապէս հեգնանքով անցնում ենք: Իմ խորին համոզմամբ սա ազգային պատուի հարց է: Այս հարցն այն հարցը չէ, որը հնարաւոր չէ լուծել մեր այսպէս կոչուած «սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակում»: Սա բարոյական հարց է, որի լուծումը աւելի շատ ...կամք, քան միջոց է պահանջում:

Ցաւալի է, որ մինչեւ հիմա, ինչ-ինչ պատճառներով, ոչ մի քաղաքական գործիչ չի անդրադարձել հենց կոնկրետ ա՛յս խնդրին: Միթէ 2.5 միլիոնանոց մեր փոքրիկ Հայաստանում չենք կարողանում արմատախիլ անել նման գորշ երեւոյթը, որը բնաւ սազական չէ մեր տեսակին: Այսպէս շարունակուելու դէպքում, այս երեխաները ապագայ չեն ունենայ: Ինչքան էլ ցաւալի է, բայց այսօր գումար են «վաստակում» կարեկցանքի արդիւնքում, վաղը, առաւել եւս աղջիկ երեխաները, գումար «կը վաստակեն» շատ աւելի սոսկալի եւ կործանիչ միջոցներով: Եկէք սթափուենք: Եւս մէկ անգամ ուզում եմ շեշտել, որ սա իրօք ազգային արժանապատուութեան խնդիր է: Համաձայնեք, որ սա բնաւ այն Հայաստանը չէ, որն ըստ ազգային հերոս Մովսէս Գորգիսեանի՝ պէտք է «վաղը գար»:



# Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ
## ՍԱՐԳԻՍ ԱՐՄԱՂԱՆԵԱՆ

*ՏՕՔԹ. ԵՂԻԿ ՃԵՐԵՃԵԱՆ*
*(Շարունակուածնախորդ թիւէն)*



*Ապրիլին, Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Կիլիկիոյ ղեկավարութիւնը կը գումարէ երկօրեայ ժողովներ, որոնց ընթացքին իր տարբեր երեսներով կը քննարկէ սպառնացող կացութիւնը: Առնուած շարք մը որոշումներու շարքին, «Ընկ. Սարգիս Արմաղանեանին կը յանձնուի զինուորական կազմակերպչական աշխատանքը» (18): Ս. Արմաղանեան, իր զինուորական փորձէն ելած, լաւապէս կ'ըմբռնէ, թէ իր պայքարը ժամանակին դէմ էր: Միւս կողմէ սակայն, խանդավառութեամբ սկսած կամաւորագրութիւնը կը սկսի ձգձգուիլ:Ստիպուած կ'ըլլայ ծիհանի վրայով մինակը անցնիլ Սիս: Շուտով Սիս կը հասնին կամաւորական խումբեր Կարապետ Լաչինեանի, Սարգիս Թուրսարգիսեանի, Կարապետ Կէօքտէրելեանի, Վարդիվառ Ճէրճճեանի, Ճիմ Ջանգալեանի եւ այլոց գլխաւորութեամբ: Ս. Արմաղանեան կը սկսի կամաւորներու մարզումներուն: «Ջիաւոր խումբը, ինքը՝ Արմաղանեան անձամբ կը մարզէր: Անզսպելի ձիերը քսան վայրկեանի մէջ կը զսպէր, կը վարժեցնէր եւ տիրոջը կը յանձնէր» (19): Այս միջոցին, Սիսի շուրջ հաւաքուած միլլիճիները իրենց օղակը կը սկսին սեղմել եւ գնդակոծել Սիսը: Հաճնոյ օգնութեան պատրաստուող կամաւորները կը ստիպուին յաճախակի պատժիչ գործողութիւններ կատարել անոնց դէմ: «Արմաղանեան քանի մը անգամ անզուսպ խոյանքներով յարձակեցաւ անոնց վրայ, լեղապատառ փախուստի մատնելով գանոնք եւ գերիներ բռնելով ֆրանսացիներուն յանձնեց» (20): Այսօրինակ կռիւներու շարքին նշանաւորներէն կ'ըլլան Սիմոն Քէօփիւրի եւ Թաւշան-Թէփէսիի կռիւները: Այս կռիւներուն մասնակից Ասատուր Սաչեան կը յուշագրէ. «Բոլորին հայեացքները ուղղուեցան Արմաղանեանին: Իրապէս, ան յաջողեցաւ այս գործին մէջն ալ: Այս անգամ այլ ռազմավարութեամբ ձիաւորները ցրուեց բլուրին ստորոտը եւ ինքը ձիուն վրայ հեծած արշաւեց դէպի յառաջ, երբ որոշ տեղ մը հասաւ, հրամայեց ձիաւորներուն, որ գրոհ տան: Հրամանը կայծակնային արագութեամբ կատարուեցաւ: Թուրքերը, շուարած այս յանդգնալից քաջութենէն, փախուստէ զատ ուրիշ բանի վրայ չմտածեցին« (21):*

*Կամաւորական խումբը դէպի Հաճըն ճամբայ չելած ֆրանսական իշխանութեան կողմէ կը զինաթափուի եւ Ս. Արմաղանեան որպէս պոլշեւիկ ամբաստանուելով կը ձերբակալուի ու կը բանտարկուի: Յունիսին Սիսը կը պարպուի եւ ժողովուրդը դժուարին պայմաններու մէջ կը գաղթէ Ատանա: Ատանա կը տեղափոխուի նաեւ Ս. Արմաղանեան:*

*Այս միջոցին Հաճընի վիճակը կը դառնայ օրհասական եւ արտաքին կապը անոր հետ ամբողջապէս կը կտրուի: Կամաւորական գունդով մը Հաճընի պաշարման օղակը քանդելն ու ժողովուրդին նահանջը դէպի Ատանա կազմակերպելը կը դառնայ անյետաձգելի անհրաժեշտութիւն: Վերստին կը ձեռնարկուի կամաւորագրութեան ու դարձեալ որպէս հրամանատար ակնարկները կը կեդրոնանան Ս. Արմաղանեանի վրայ: Ժամանակաշրջանի աշխոյժ մասնակիցներէն Բ. Ժամկոչեան կը գրէ. «Դաշնակցականները կը ներկայացնէին սերժանտ Գէորգ մը, ռամկավար-վերակազմեալները՝ Ճիմ Ջանգալեան, որ ֆրանսական բանակին մէջ էր եւ անոր արտօնուիլը խնդրական էր, քանի որ ֆրանսական զինուորականութիւնը ուղղակի չէր մասնակցեր, հնչակեաններուն կողմէ թեկնածու էր Սարգիս Արմաղանեան: Ամէն հաշիւ մէկ կողմ ձգելով, ամենէն յարմարն էր Սարգիսը, որ արդէն զօր. Անդրանիկին քով ցոյց տուած էր իր արժէքը: Բայց կուսակցամոլութիւնը չէր հանդուրժեր» (22): Ս. Արմաղանեանի հրամանատար նշանակուիլը նպատակայարմար էր նաեւ մէկ այլ դիտանկիւնէ. «Հոս, անցողակի պէտք է յիշել, թէ այս արշաւախումբին ջախջախիչ մեծամասնութիւնը կը բաղկանար հնչակեաններէ: Անկէ վերջ 30-ի չափ ռամկավարներէ եւ անոնցմէ ալ նուազ թիւով դաշնակցականներէ, մինչ ընդհանուր թիւն էր 500 հոգի» (23):*

*Տարիներ առաջ հաճոյքը ունեցած եմ Թորոնթոյի մէջ հանդիպումներ ունենալու այցելու պոլսահայ իննիսունամեայ երիտասարդ ծերունիի մը հետ, որ նմանօրինակ զարթօնքի մը նախանշանները ցոյց տուող պատմութիւններ կը թուէր, ըսելով թէ Պոլիս բնակութիւն հաստատած էին շատ մը գաւառներէն եւ մասնաւորաբար Սասունի շրջանէն եկած թրքախօս հայ գիւղացիներ, որոնք նոր ուժ եւ թափ տուած էին ազգային կեանքին եւ որոնք իրենց գործերու յաջողութեամբ եւ նկարագրային համարձակութեամբ յարգանք կը պարտադրէին Պոլսոյ հանրային թէ ընկերային կեանքին մէջ, եւ այդպէսով մեծ նպաստ կը բերէին հայութեան ոտնակոխուած իրաւունքներու վերանայումի աշխատանքին մէջ:*

*Հայկական Ցեղասպանութեան հարիւրամեակի սեմին ուրախալի երեւոյթ կարելի է նկատել ճակատը համբուրելի պոլսահայ այդ պահանջատէրերուն, որոնք կը նախընտրեն վնասուիլ քաղաքացիական արիութիւն կիրարկելով, քան թէ «պատեանին տակ մնալով օրըստօրէ նուազիլ եւ ոչնչանալ»: Էսդուքեանի բառերով՝ «Նախընտրեցինք կեղեւի մէջ ընկոյզ մը ըլլալու փոխարէն՝ համեղ ուտեստ մը ըլլալ»: Պատեանը կոտրող պոլսահայերը թաքստոցէն դուրս բերին «90 տարուան կորսուած քոյրեր ու եղբայրներ, որոնք այդքան տարիներ» կը փնտռէին իրենց արմատը կամ յափշտակուած ազգային պատկանելիութիւնը: Պատեանը կոտրող պոլսահայերը, կամ նորօրեայ հայ ֆէտայիները, Հրանդ Տինքի կտակին եւ յիշատակին կու տան պատիւ ու ակնածանք, եւ դուրսէն դիտող հայերուս կու տան իրենց քաջութեան առջեւ խոնարհելու սէր ու յարգանք: Պատեանը կոտրող պոլսահայերը «բոլորս հայ ենք» ըսող հայասէր եւ ազատամիտ Թուրքերուն կու տան առաւել պայքարելու կամք ու եռանդ եւ Թուրք պետական շրջանակներով դարձողներուն կու տան գլխու ցաւ ու պտոյտ: Պատեանը կոտրող մեր պոլսահայ եղբայրները մինակ չեն միջազգայնացումի կամ աշխարհայնացումի (Globalization) օրէնքներով եւ կանոններով գոր-*

*Շար.ը էջ 18*






# ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՍԻՐՏԸ

*ՆՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ*

*Ընթերցողի սեղանին է դրուած յոյժ բովանդակալից եւ հետաքրքրական գիրք մը՝ ՎԱՀԷ-ՎԱՀԵԱՆԻ «ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՍԻՐՏԸ», որ կը պարփակէ՝ բանաստեղծ, խմբագիր, կրթական մշակ եւ ազգային հասարակական գործիչ Վահէ-Վահեանի նամականին: Հատոր մը՝ այս, որ լոյս է տեսած խմբագրութեամբը եւ ծանօթագրութեամբը հայ գիր ու գիրքի անխոնջ մշակ Արամ Սեփեթճեանի, Սիփան Հրատարակչատունէն, 2012-ին եւ՝ բաղձանքովը հանգուցեալ հեղինակին, որ իր մօտ գտնուող նամակներու ծրարը յանձներ էր որդիին՝ ճարտարապետ Ցոլակ Ապտալեանին, առ ի հրատարակութիւն իր չիջումէն ետք:*

*Նամակագրութիւնը՝ մեր գրականութենէն ներս եւ առհասարակ, նոր տարածքով կը հարստացնէ նամակագրին ներաշխարհի բացայայտումը: Անիկա անկեղծ հաղորդակցութիւն է, գերազանցօրէն, մտերիմ գրոյց, խոհի եւ յոյզի խոստովանանք, որոնք անմիջականօրէն կը բխին հեղինակին ներաշխարհէն, առանց հպումին՝ ներքին խմբագրին, որ հաւանաբար անոնցմէ պիտի զեղչէր բառեր ու տողեր, հրապարակումի «անյարմար» թուացող կամ դատուող...: Իսկ երբ նամականիին հեղինակը բանաստեղծ հոգի մըն է զգայուն՝ տառապանքի դժոխքէն անցած, յետ-Եղեռնեան Սփիւռքի գրական-կրթական-մշակութային-հասարակական կեանքի վկան ու ամբողջանուէր մասնակիցը, այն ատեն այդ նամակագրութեան հրատարակութիւնը կը դառնայ նաեւ ու յատկապէս վաւերագրական արժէք ներկայացնող հատորի մը լոյս ընծայումը, մեր պատմութեան մէկ փոթորկայոյզ շրջանի խորապրուած փորձառութեան մը արձագանգը....:*

*Վահէ-Վահեանի հրապարակուած նամակներէն քիչեր միայն ունին ներանձնական բնոյթ, ուղղուած սիրուած էակներու, ընտանեկան անդամներու թէ մտերիմներու: Մեծաւ մասամբ, անոնք ուղղուած են իր ժամանակի գրական, հասարակական, հայրենի կարկառուն դէմքերու եւ կը շօշափեն գրական-գեղագիտական խնդիրներ, այլեւ՝ մեր ժողովուրդն ու հայրենիքը յուզող խռովքներն ու տագնապները, ազգային-հասարակական դրական թէ ժխտական երեւոյթները, որոնք միասնաբար կը հիւսեն մեր պատմութեան արդի ժամանակաշրջանի տարեգրութիւնը: Այդ բոլորին մէջ, կը ցցուի պատկառազդու հասակն ու անհատականութիւնը ՎԱՀԷ-ՎԱՀԵԱՆԻ՝ խորապէս սկզբունքային ու գաղափարապաշտ, զօրաւոր համոզումներու տէր, բծախնդիր ու խղճամիտ, արի ու տոկուն....ամբողջանուէր կամաւորագրեալը հայ գիր ու գրականութեան, ազգին ու հայրենիքին...:*

*Տարագրութեան գեհենէն անցած բանաստեղծը՝ իր նամակներուն մէջ, մշտապէս պիտի մնար հալածանքին տակ՝ իր ենթագիտակցութիւնը խռովող աքսորի պատկերներուն եւ սարսափի վերապրումներուն: Լիւսի Փոթուքեանին (Զարիֆեան) ուղղուած նամակին մէջ, բանաստեղծը կը գրէ այնքան յատկանշականօրէն. «Միտքս կ'երթայ նորէն իմ մանկութեանս, աքսորի ճամբուն: Մսագործի դանակէն սկսեալ մինչեւ մանգաղով, կացինով ու հրազէնի տեսակներով զինուած խուժանը իջաւ մեր վրայ սեւ ամպի պէս, մարմնացեալ մղձաւանջի՛ նման, երկու կողմերն ի վար խոր ու երկար այն կիրճին, ուր իրարու սեղմուեր, անշարժացեր էինք մենք, բազմութիւն մը՝ հազար հինգ հարիւրէ աւելի կիներու եւ մանուկներու: Գունափոխուեցաւ մէկէն ամէ՜ն բան: Ծուխի եւ արիւնի խառնուրդ մը պղտորեց մեր աչքերը, ու սարսափը տուաւ տարօրինակ զգայութիւն մը մեզի: Սկզբնական գոռում-գոչումին յաջորդեց պապանձում մը կատարեալ:....Մնացինք մենք շշմած՝ մեր մեռելներուն առջեւ, վիրաւորեալներուն խուլ հառաչանքին դիմաց, թշուառ ցուցադրութեամբ մը կիսամերկ մարմիններու ...: Այնուհետեւ, վերապրողներուս բաժինը եղան՝ լա՛ցը անօթութեան ու ցաւի, ստորնացո՛ւմը նախատինքի, ներքին ճանկռտուքը անարգելելի վերյիշումներուն ու տեսակ մը վրէժխնդիր կիրք՝ ապրելու, տեւելու եւ փոխհատուցման...»:*

*Ապրելու եւ տեւելու այդ վրէժխնդրութեան ամէնէն ազնիւ արտայայտութիւնը Վահէ-Վահեան գուցէ գտաւ գրելու, ստեղծագործելու իր տենդին մէջ...: Նշան Պէշիկթաշլեանին գրած իր նամակին մէջ, դիպուկ են իր խօսքերը մեր լեզուին մասին, որուն նուիրուեցաւ ան իր գրականութեամբ, ուսուցչութեամբ եւ «Անի» գրական հանդէսի խմբագրութեամբ: «Մեր հարստութեան վերջին լուման է մեր լեզուն: Եթէ կորսնցնենք նաեւ այդ մնացածը, մեզի կը մնայ գերեզման փնտռել մեր սնանկ գոյութեան համար»:*

*Յանուն հայ լեզուին ու հայ գիրին, գաղափարին ու գեղեցկութեան համար մղուած անհատնում եւ հոգենուէր ճիգ էր «Անի» ամսագրի խմբագրումը՝ շուրջ տասը տարի անընդմէջ: Հոսանքին դէմ թիավարելու սպառում մը՝ արտասահմանեան մեր պայմաններուն մէջ: «Պէտք է որ աշխատինք եւ տանք սրտագին, հոգիով», կը գրէ ան Հրաչ Զարդարեանին հասցէագրուած նամակին մէջ. «Քիչ անգամ մեր ժողովուրդը պէտք ունեցած է իմացական առողջ սնունդի՝ ա՛յնքան անհրաժեշտաբար որքան ներկայիս: ...Դուք կոչուած էք ազգին ու մարդկութեան ձեր պարտքը հատուցանելու՝ գեղարուեստական գրականութեան ուղիով....»: Իր ծրագիրն էր, արդարեւ, արտասահմանի լաւագոյն գրական ուժերը համախմբել «Անի»ի մէջ: «Պէտք է որ Սփիւռքային գրականութիւնը ստանայ յստակ դիմագիծ, միակ եւ ընդհանուր հայ գրականութեան մը երջանիկ իրականացումէն առաջ, որպէսզի վերջին արդիւնքին մէջ կարենայ ունենալ իր բարենպաստ դերը», կը գրէ ան Պետրոս Զարոյեանին, կոչ ընելով միաժամանակ որ աշխատանք տարուէր որ գրական այս շարժումին իրենց աշխատակցութիւնը բերէին բոլոր անոնք, որ ունէին գրական շնորհ եւ գաղափարական նուիրում: Գրական-գեղարուեստական երկի մը բուն արժեչափը Վահեան պիտի փնտռէր գերազանցօրէն՝ մարդու ներաշխարհէն ներս, ցարդ չայցելուած խորութիւններ խուզարկելու միտող անոր բերած թափանցամիտ հայեացքին մէջ:*

*Առօրեային բռնակալութիւնը, սակայն, կը կլանէր զինք, քանզի Վահէ-Վահեան էր նաեւ կրթական տիպար մշակ՝ կոչումով, պատրաստութեամբ, իտէալով ու նուիրումով: Բենիամին Նուրիկեանին ուղղուած իր նամակին մէջ, ան կը գրէ սրտացաւօրէն. «Առօրեան է որ կը կլանէ զիս: Դասաւանդութիւն, դպրոցական անհամար տետրակներու սրբագրութիւն եւ յետոյ «Անի»ն, մինակս, անօգնական»: Կային անհամար դժուարութիւններ՝ ամսագրին նիւթականի ապահովումը, աշխատակիցներ գտնելու, ամսագիրը տարածելու գործը: Ի զուր չէ, որ խմբագրի իր աշխատանքին մասին անդրադառնալով, ան պիտի ըսէր, թէ անիկա «Անընդհատ ու կաթիլ-կաթիլ սպառում» էր: Տակաւ պիտի սրտնեղէր բանաստեղծը ի տես Սփիւռքի մեր գրողներուն մօտ հաւատքի ու խանդավառութեան պակասին՝ հայ գիր ու գիրքին նկատմամբ: Ան սրտագին կ'աւաղէ. «Զիս մոռցան ու բոլորովին մինակ թողուցին գրիչի ու գաղափարի այն եղբայրներս մանաւանդ՝ որոնց օժանդակութեան, գործակցութեա՜ն վրայ հաշուած էի ես, երբ յանձն կ'առնէի ամսագիր մը հրատարակելու տաժանքը», Հրաչ Զարդարեանին գրուած նամակին մէջ:*

*Վահէ-Վահեանի մխիթարանքի ու ներշնչման գերագոյն աղբիւրը պիտի ըլլար վերածնած հայրենիքը: Յատկանշական են նամակի մը հետեւեալ տողերը՝ «Մեր մխիթարութիւնն ու փա՛ռքը կը մնայ նորէն՝ ապրող, ամէն օր քիչ մը աւելի զօրացող ու գեղեցկացող մեր հայրենիքը, որ եթէ չէ տակաւին լիալիր վարձքը մեր դարաւոր եւ արիւնոտ մաքառումին, միա՛կ դարբնոցն է սակայն, ուր կը ջրդեղուի պողպատը մեր իրաւապահանջ կամքին»:*

*Տակաւին, ինչպէս յայտնի կը դառնայ իր նամակներէն, Վահէ-Վահեանի գործունէութիւնը չսահմանափակուեցաւ իր խմբագրական, ստեղծագործական եւ կրթական աշխատանքներով միայն, ան հայ մամուլին մէջ եւս բերաւ իր քաղաքացիական սկզբունքային կեցուածքէն բխող թանկագին աշխատակցութիւնը, ինչպէս նաեւ՝ արտասահմանեան գաղութներու, թէ հայրենական բեմերէն հրապարակային խօսք արտասանեց հայ կեանքը յուզող գրական-հասարակական-ազգային հարցերուն շուրջ, փնտռուած բանախօս որպէս, որուն ծանրակշիռ խօսքը լուսարձակ ուղեցոյց եղաւ հայ տարագիր բազմութիւններուն համար մասնաւորապէս:*

*Իր նամակները կը վկայեն որ անոր կեանքը հիւսուեցաւ հայ կեանքի յետ-Եղեռնեան կարեւորագոյն իրադարձութեանց հետ: Սփիւռքեան կեանքի կազմակերպում՝ դպրոց, մամուլ, գրականութիւն, միութենական-քաղաքական կեանք, հայրենադարձ շարժում, Սփիւռք-Հայաստան կապերու մերձեցում եւ ամրապնդում, Մեծ Եղեռնի Յիսունամեակ, Լիբանանի քաղաքացիական կռիւներ, անդրադարձը անոնց Մերձաւոր Արեւելքի գաղութներու ճակատագրին....Հայաստանի անկախացում: Այս բոլորը անցան իր զգայուն ներաշխարհի պրիսմակէն՝ իր միտքն ու հոգին, իր կեանքը դարձնելով սրբազան այրում ի սէր գաղափարի ու գեղեցկութեան, յանուն մեր ժողովուրդի ու հայրենիքի անխաթար ու անխանգար վերապրումին...:*

*Իր կեանքի վերջալոյսին գրուած նամակներուն մէջ, Վահեան սրտագին կոչ կ'ընէ առաջքը առնելու խօլամիտ այն անզգամութեան, որ կ'աճապարէ դամբանական կարդալ Մերձաւոր Արեւելքի հայութեան վրայ: «Մերձաւոր Արեւելքի հայկական գաղութները, ունենալով Պէյրութը իբրեւ կեդրոն, եղած են, կը մնան ու վաղն ալ պիտի ըլլան ողնասիւնը սփիւռքահայութեան, աղբիւրը՝ անոր բարոյական ու մտաւոր ուժերուն, հայթայթիչը՝ գոյատեւման պայքարի մարտիկներուն...», կը գրէ ան Սմբատ Տէրունեանին յղած իր նամակին մէջ: Զուգահեռաբար, դառնօրէն կ'ափսոսայ ան շուկայիկ մտածելակերպին տիրապետումը՝ իր գաղափարական էութեամբ յատկանշուող Բարեգործականի որոշ շրջանակներէն ներս եւ կ'ահազանգէ Անդրանիկ Փոլատեանին գրուած իր նամակին մէջ. «Հ.Բ.Ը.Մ.-ը, իր վարչական դրութեան մէջ, կը կարօտի հիմնական վերափոխութեան: Այլապէս՝ հեռու չէ անկանգնելի փլուզումը անոր»: Նոյնքան տագնապալից է իր ձայնը Ալեք Մանուկեանին գրուած նամակին մէջ՝ «Ալեք Մանուկեան Մշակութային Կեդրոն»ին վաճառման ի լուր. «Պէտք չէ՛ որ վաճառուի Ալեք Մանուկեան Մշակութային Կեդրոնին շէնքը, լիբանանահայութեան հետ նաեւ ամբողջ Սփիւռքին ի շահ, ինչո՞ւ չէ՝ նաեւ մեր Հայրենիքին սիրոյն: Զայն պէտք չէ որ ունենան անոնք որ չեն սորված արժեւորել նիւթը՝ չափովը անոր տուած կամ տալիք հոգեւոր, բարոյական, մտաւոր արդիւնքին»: Ինչ կը վերաբերի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մասին շրջան ընող ատենի գրոյցներուն, Վահէ-Վահեան դարձեալ՝ ցաւոտ սրտի այրումով կը գրէ Անդրանիկ Տագէսեանին. «Կը լսեմ տխուր բաներ Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ տիրող ներկայ կացութեան մասին, ու կ'այրի սիրտս իր ցաւէն: Մեր ամբողջ սփիւռքին մէջ, գրեթէ միակ կեդրոնն է ան, որ կրնայ դառնալ մարգարանը հայ հոգիի վաղուան պահակներուն»: Նոյն ցաւատանջ ապրումով, Հայաստանի վերանկախացման վաղորդայնին, կը վրդովուի բանաստեղծը ի լուր մեր հայրենիքէն ներս պատասխանատու անձանց «ցնորամտութիւններուն»: «Ո՞ւր կ'ուզեն տանիլ մեր անտիրական ժողովուրդը, ոճրայնօրէն թրքամէտ իրենց զառանցանքներով: Երրորդ Ուժի բացառման սկզբունքը, հրաւէր մըն է դէպի անդունդը վերջնական գահավիժումի», կը գրէ ան Արա Գալայճեանին 21 Հոկտ. 1990-ին:*

*Իր ներանձնական նամակներուն մէջ, ուղղուած իր ամէնէն սիրուած էակներուն,, Վահէ-Վահեան կը բանայ իր անձնական մտերմագոյն կեանքի խորախոր-*

*Շար.ը էջ 15*

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

## «ՄԵՐ ՄԻԱԿ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ ՄՇԱԿՈՅԹՆ Է»
## ԱԶԱՏՈՒՀԻ (ՏԱԹԵՒ) ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

*ԱՐՄԻՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ*

ՀՀ նախագահի 2012 թ. արուեստի բնագաւառի մրցանակին ներկայացուած ճարտարապետութեան եւ կերպարուեստի աշխատանքները ցուցադրւում են «Ակադեմիա» պատկերասրահում:

Երիտասարդ, բայց մեծահասակ արուեստագէտների կողքին իր աշխատանքներն է ներկայացրել նաեւ դիզայներ, լուսանկարչուհի Ազատուհի (Տաթեւ) Մնացականեանը: Նա բաւականին մեծ սիրով է խօսում իր աշխատանքների մասին, որոնք առանձնանում են իրենց նմանը չունեցող օրինակներով: Տաթեւը ներկայացրել է հայ մեծահասակ անուանի արուեստագէտներին իրենց անձնական արուեստանոցներում:

Լուսանկարչուհին ասում է. «Իմ աշխատանքներում ներկայացրել եմ արուեստի երախտաւորներին՝ առանձնացնելով նկարիչներին եւ քանդակագործներին: Այսօր ամենափակուածն ու ամենաանմեղը նկարիչներն ու քանդակագործներն են ի տարբերութիւն երգիչների ու դերասանների, որոնք ունեն բեմ՝ հանդէս գալու համար: Ես սկսել եմ ներկայացնել մեծահասակ արուեստագէտներին, որոնց շատ քիչ է մնացել ապրելու: Եւ նրանք այն մարդկանց մի խումբն են, ովքեր ինչ որ չափով կապուած են էն միւս անցեալի հետ, որոնց մենք չենք տեսել: Այսօր այդ արուեստագէտներն ունեն պատմութիւն, արխիւ՝ թողած իրենց ստեղծագործութիւններով: Ես ինքս, լինելով երիտասարդ, որոշեցի յարգանք մատուցել նրանց եւ հիմնական նպատակն այն է, որ կենդանութեան օրօք դա լինի: Բայց ցաւօք սրտի արդէն մի քանի հոգի բացակայում են իմ նախագծում տեղ գտած արուեստագէտներից՝ գեղանկարիչ Յակոբ Յակոբեանը, գեղանկարչուհի Ելենա Աբրահամեանը, գեղանկարիչ Վոլոդիա Սահակեանը, կոմպոզիտոր Էդուարդ Միրզոյեանը:

«Ակադեմիա» պատկերասրահում իրենց աշխատանքներն են ներկայացրել՝ Հրանտ Կոմիտասեան, Աշոտ Գրիգորեան, Լեւոն Խրիստափորեան, Զարուհի Աւետիսեան՝ «ՀՀ կենտրոնական բանկի երրորդ մասնաշէնքի ինժեներական ցանցերի արդիականացման եւ ինտերիերի դիզայնի նախագծի մշակում եւ իրականացում՝

Արտակ Ղուլեան՝ «Վաչէ եւ Թամար Մանուկեան» մատենադարանի շէնքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Լեւոն Աբրահամեան՝ «Պլաստիլինէ նկարազարդումներ»

Ռուբէն Արուտչեան՝ Դիմանկարներ «Մենք» նկարաշարից՝ «Գարեգին Նժդեհ», «Սայաթ Նովա», «Շահան Նաթալի»:

Հենրիխ Էլիբեկեան՝ «Երկխօսութիւն կեանքի տեւողութեամբ», դիմանկարների շարք Յակոբ Յակոբեան՝ «Սիրոյ պարտէզ», գեղանկարների շարք Միսակ Մաղաքեան՝ «Քարի Հոգին» ցուցահանդէս-նախագիծ Արամայիս Մխիթարեան՝ «Յիսուսի երկրորդ գալուստը», գեղանկար Էդիկ Վարդանեան՝ «Թալին» նկարաշարից. «Երազ», «Իմ կորցրած աշունը», «Տերեւաթափի օր», «Բարի լոյս Թալինցիներ», «Ցորեն են չորացնում», «Թալին»

Ազատուհի (Տաթեւ) Մնացականեան՝ «Արուեստի հայ երախտաւորների ի մասնաւորի նկարիչ քանդակագործների ֆոտոպորտրետների շարք»

Շահէն Խաչատրեան՝ «Ցաւի գոյնը՝ Եղեռնի անդրադարձը հայ նկարչութեան մէջ», «Հ. Այվազովսկի», հայ նկարիչներին նվիրված պատկերագրեր

Սամուէլ Կարապետեան՝ «Անի-1050», ալբոմ-ուսումնասիրութիւն

Մեծահասակ արուեստագէտների աշխատանքները կը ցուցադրուեն մինչեւ Մարտի 15-ը:

## ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE.
PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՍԻՐՏԸ

*Շարունակուած էջ 14–էն*

հուրդ ծալքերը, լսելի դարձնելով ընթերցողին՝ իր սրտի տրոփիւնը, շունչի հեւքը, հոգիի թրթիռն ու նրբանուրբ մեղեդին, որոնք ընթերցողը կ՚առնէն իր ներքին խորապրումներուն առթած ներշնչանքի կախարդանքին տակ...:

Եւ այսպէս, Վահէ-Վահեան՝ բանաստեղծն ու խմբագիրը, կրթական մշակն ու ազգային հասարակական գործիչը, նամակ առ նամակ եւ տող առ տող կը բանայ իր սրտին ու մտքին գաղտնարանը, տեսանելի դարձնելով ի մասնաւորի իր խռովքներն ու տագնապները, երազներն ու տեսիլքը՝ աւելի քան վաթսուն տարիներու վրայ երկարող հայ կեանքի գրական-գեղարուեստական, մշակութային-կրթական, ազգային-հասարակական խնդիրներուն շուրջ....սիրտէ-սիրտ փոխանցուող անկեղծութեամբ եւ հարազատութեամբ: Նամականիին ընթերցումը, արեւմտահայերէնի անոր ողջ գեղեցկութեամբ ու անթերի մաքրութեամբ, հոգեմտաւոր խրախճանք է ....բանաստեղծի սրտին հետ հոգեյոյզ հաղորդակցութիւն, որմէ դուրս կու գայ ընթերցողը առաւել հարստացած, ազնուացած ու հայացած...

Իր դստեր՝ Շողեր Ապտալեանին ուղղուած մէկ նամակին մէջ, բանաստեղծը ցաւատանջ պիտի խոստովանէր. «Դատապարտուած եմ մնալու միշտ չհասկցուած մարդը...»: Սիրելի բանաստեղծ, որ եղար նաեւ՝ Հայոց լեզուի եւ Հայ գրականութեան մեր երախտարժան ուսուցիչը, ՀԲԸՄ Դարուհի Յակոբեան Երկր. Վարժարանի յարկին տակ, կրնաս վստա՛հ ըլլալ անդէնական կեանքիդ մէջ, որ այս **ՆԱՄԱԿՆԵՐՈՒ** հոգեպարար ընթերցումով, մենք կրցանք քիչ մը աւելի թափանցել քու հարուստ ներաշխարհիդ խորախորհուրդ ծալքերէն ներս, աւելի լաւ հասկնալ ու գնահատել բացառիկ անձդ, որուն սիրտը մշտապէս բաբախեց մեծ **ՍԻՐՈՎԸ** մեր ժողովուրդին ու հայրենիքին, **ՊԱՇՏԱՄՈՒՆՔՈՎԸ** հայ գիր ու գրականութեան, **ՀԱՅ ՀՈԳԻԻՆ**:

Յաւերժ լո՛յս ու օրհնութի՛ւն քու յիշատակիդ, **ՎԱՐԶՔԸ ԿԱՏԱՐ**՝ այս արժէքաւոր հատորը կազմող ու խմբագրող Արամ Սեփեթճեանին, ինչպէս նաեւ՝ գայն հրատարակելու յանձնառութիւնը ի կատար ածող Յովակ եւ Շաքէ Ապտալեաններուն:

AGBU
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն
Promoting the Armenian Heritage Around the World

AGBU Western District Committee

Cordially invites you to a
**Presentation**
by


His Excellency Arman Kirakosyan

**His Excellency Arman Kirakosyan**
Ambassador Extraordinary and Plenipotentiary of the Republic of Armenia in Austria

On the topic of

**"Regional and Security Policy of Armenia"**

Under the patronage of
**Berge Setrakian**
AGBU President

Introductory remarks by
**Prof. Peter Cowe**
UCLA Naregatsi Chair of Armenian Studies

Master of Ceremonies
**Prof. Hrair Dekmejian**
Director of USC Institute of Armenian Studies

Co-Sponsored by
**Armenian Society of Los Angeles**
**Armenian Bar Association**
**Organization of Istanbul Armenians**

***Tuesday, April 2, 2013 at 7:00 p.m.***
***Armenian Society Center***
***117 South Louise Ave., Glendale***

Open to the Public
Reception to Follow

# ՊԱՀԵՐ ՈՒ ԽՈՀԵՐ
## ԼԻԱՑՈՒՄ՝ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՆՉՈՎ

*ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆ*

*Յարութեան գաղափարախօսութիւնը քրիստոնէական կրօնքին ամէնէն ուրայատուկ եւ հիմնական գիծն է, որ իր սկիզբը առած է Անպարագրելի ԲԱՆին ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ խորհուրդէն ու զայն կամրջած՝ Խաչելութիւն-Թաղում եւ ՅԱՐՈՒԹԻՒՆ միացեալ Իմաստաւորումին: Կրօնաշունչ խորհրդածութիւնները կը պատկանին ամբողջ մարդկութեան անխտիր՝ իբրեւ կեանքի ուղեգիծ, որուն հաւատաւոր անդամները նոյնիսկ եթէ տարբերին ուրիշներէն իրենց մտածումներովն ու կեանքին օրինակովը: Աստուած ԲԱՆն իսկ է, իսկ Աստուածայայտնութիւնը կը խորհրդանշէ ԲԱՆին Մարդեղութեան խորհուրդը: Մտածումներու նոյն զուգորդութեամբ Հրաշափառ Յարութեան մէջ մենք կ՝ողջունենք Մարդ էակին ՈԳԵՂԻՆԱՑՈՒՄը առ Աստուած, սակայն այն միակ պայմանով՝ որ մեր հոգիները գիտնանք վերածել Բարիին ու Վսեմին ձօնուած տաճարներու:*

*Հայկական մեր դարաւոր քրիստոնէաշունչ ըմբռնողութիւնը մեզ առաջնորդած է դէպի ԲԱՐԻն ու ՎՍԵՄը: Մեր ժողովուրդին պատմութիւնը եղած է ԱՆՎԵՐՋ ՊԱՅՔԱՐ յանուն մեր Ինքնութեան ու Գոյապահպանման: ՝Մեր ներաշխարհն ու մտածողութիւնը պարուրուած են քրիստոնէական բարոյագիտութեան առաջնահերթ սկզբունքներով ու մեր առօրեան կը ներշնչուի նոյն Ոգիով: Այսինքն՝ մեծագոյն ճշմարտութիւնը այն է, թէ՝ ՃԱՌԱԳԱՅԹԸ ՉԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՒԻՐ ու կարելի չէ զայն ԹԱՂԵԼ ինչ ալ ըլլան պայմանները: Պիտի գայ ժամանակը,- ուշ թէ կանուխ,- որ ճառագայթը պիտի ունենայ կարողութիւնը իրեն պարտադրուած Տապանաքարն իսկ պարտութեան մատնելու եւ դուրս շպրտելու զայն: Ահաւասիկ՝ այն միակ տարբերութիւնը, որ մենք կը գտնենք ընդմէջ քրիստոնէութեան եւ կրօնական այլ վարդապետութիւններու:*

*Արդարեւ,Քրիստոսի ծնունդով նուիրականացած Աստուածայայտնութիւնն ու Մարդեղութեան Խորհուրդն անոր, աշխարհի մարդկութեան հոգեբարոյական ճակատագիրը պիտի չփոխէր այնքան՝ որքան Յարութեան գաղափարին յաղթանակը, որ կ՝աւետէր մարդկութեան, թէ՝ գիտակցեալ մահով կարելի կը դառնայ յաղթել մահուան սպառնալիքներուն, որ Մարդ էակին անվերջակէտ երկխօսութիւնն է Անհունին հետ ՝ ովկիանոսային խորութիւններուն հակադրուող իր երկնասլաց իմաստասիրութիւններով ու գեղարուեստական անմրցելի նուաճումներով,- նկատի ունիմ Քրիստոնեայ համայն աշխարհին իմաստասիրական եւ գեղարուեստական Միտքին քսան դարերու հսկայածաւալ ստեղծագործութիւնները:*

*Ուէ քրիստոնեայ մարդու համար այս մտածումները ունին հաւասարազօր իմաստ: Հայուն համար՝ նոյնպէս, միայն այն տարբերութեամբ, թէ մենք իբրեւ ազգային հաւաքականութիւն պահելով հանդերձ քրիստոնէութեան համամարդկային տարողութիւնը, զայն շաղկապեր ենք նաեւ մեր ազգային պատմութեան Գոյերթին ու Ճակատագիրին հետ: Օտարազգի քրիստոնեաները , -երբեմն կրօնամոլ փոքրամասնութիւններն անոնց,- կը մերժեն հոգեւոր զգացողութեան եւ հաւատալիքներուն շաղկապումը ժողովուրդներու ազգային աւանդութիւններու եւ անոնց առողջ հաւաքական գիտակցութեան հետ: Սակայն, այն ինչ որ անյարիր է անոնց համար, մեր պարագային՝ մենք Հայ Եկեղեցիին յանձներ ենք մեր ժողովուրդին տէր կանգնելու անվերապահ եւ անփոխարինելի իրաւունքը, մանաւանդ այն ժամանակներուն երբ զգացեր ենք բացակայութիւնը հայկական անկախ պետականութեան ու բանակային ՈՒԺին: Այս փոխադարձ կապը եղած է այնքան սերտ եւ անխզելի, որ հայ եկեղեցականը բնականօրէն Յիսուսի կեանքին դրուագներուն մէջ գտած է նմանութիւնը Հայ ժողովուրդի ապրած անպատմելի տառապանքին ու Գողգոթային, եւ արձանագրած իր ազատագրական յաղթանակներուն , Աւարայրէն՝ մինչեւ Սարդարապատ եւ Արցախ, ի դէմս՝ հրաշափառ Յարութեան Գաղափարին,- եւ այս՝ յանուն հայ ժողովուրդի ազգային արդար իրաւունքներու պատմական ճշմարտութեան ու յաղթանակին:*

*Հայ Մարդուն համար Յարութեան Գաղափարը իր լիութիւնը կը գտնէ, երբ գերեզմանաքարը կը փոխարինենք Մեղքի ու մեղանչումի Տապանաքարով:Արդ, պիտի կարենա՞նք արդեօք մեր մարդկային ուժերով յարութիւն առնել մեր վրայ ծանրօրէն ճնշող Մեղքի հանապազօրեայ փորձութիւններէն: Պայման չէ՝ որ սպասենք Աւագ Շաբթուան իւրաքանչիւր Օրուան Խորհուրդին ու Պատգամին խորապէս ըմբռնելու համար տիեզերաշունչ գաղափարախօսութիւնը Յարութեան: Այն ատեն է որ մենք մեզի իրաւունք պիտի տանք Զատկուան այս օրերուն հոգեմտաւոր զգացումներով ողջունել գիրար եւ աւետել Մեծ Վարդապետին Յարութեան Տօնը, որ լաւագոյնս կը խորհրդանշէ Ինքնութիւնը ՀԱՅ ՄԱՐԴուն:*

# ՍԱՐԳԻՍ ԱՐՄԱՂԱՆԵԱՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*կան ճակատի Կեդրոնական Մարմնի (որուն ՍԴՀԿ-ի կողմէ մաս կը կազմէր հինաւուրց մարտիկ, կեստափոյի գնտանները «վայելած» Աբրահամ Արապեան-Ե.Ճ.) գիտակցութեան (31), տունէն դուրս կը հրաւիրեն Ս. Արմաղանեանը ու զայն կ՚առաջնորդեն դէպի ամայի վայր մը: Անոր կ՚ընկերանայ կինը՝ Հայկուհին: Ճամբու ընթացքին, Ս. Արմաղանեան ճարպիկ շարժումով մը ինքզինք կը նետէ ցած պատի մը միւս կողմը եւ կը փորձէ անհետանալ պարտէզներուն մէջ: Արձակուած գնդակները աւելի արագ էին: Ս. Արմաղանեան կ՚իյնայ վիրաւոր: Ան, իրեն մօտեցող ոճրագործներուն մէջ կը նկատէ Կիլիկիոյ իր նախկին զինուորներէն, որոնցմէ մէկուն կեանքը փրկած էր իր անձնական քաջութեամբ: Իր պարսաւանքի վերջին խօսքերը կ՚ուղղէ ոճրագործներու երեսին: Վրայ կը հասնի գնդակներու տարափը:*

*Կատարուած ոճիրին դրդապատճառը պարզ էր. «Որպէսզի դիւրութեամբ կատարեն իրենց աւազակային կողոպուտը: Որմէ յետոյ ներկայացան հայ առեւտրականներուն «հայրենակից 200 հազար ֆրանք պիտի տաս, եթէ չտաս հետեւանքը դուն շատ լաւ գիտես»: Ահա թէ ո՞ւր է պահուած օձին գլուխը եւ ահա թէ ինչո՞ւ համար քաւութեան նոխազ եղաւ մեր ազնիւ հերոսը» (32): Ոճրագործներուն տուած պատասխանը պարզ էր ու հաշտ օրուան մթնոլորտին եւ իրենց աւանդութեան: Ս. Արմաղանեան կ՚ամբաստանուէր որպէս Ֆաշիզմի գործակալ:*

*Հայկուհի Արմաղանեանին տուած պատասխանը այդ կապակցութեամբ պարզ է ու անպաճոյճ. «Ամուսինս նախ գերմաներէն բառ մը չէր գիտեր, յետոյ մեր տանը սեմէն ներս գերմանացի մը կոխած չէ: Ընդհակառակը, կ՚ատէր հոգեպէս զանոնք, որպէս պատասխանատուներ հայկական 1915-ի սարսափներուն, միւս կողմանէ կը հաւատար ռուս կոզակներու յաղթանակին, գովելով անոնց քաջասրտութիւնը, որոնց հետ միասին կռուած էր Կովկասի ճակատին վրայ, Թուրքերուն դէմ: Հարցուցէք Սէնթ Անթուանի ամբողջ հայութեան, ոչ ոք կրնայ այդ զրպարտութիւնը ընել, եթէ ամուսինս գերմաններու գործակալ ըլլար, օրական 20 կրամ չոր հացով նաւահանգիստի բեռնակիր ըլլալու պէտք չունէր, երբ ծովեզերքը գործ չըլլար, քարահանքը աշխատելու չէր ստիպուեր, իր անչափահաս զաւակներուն օրապահիկը ճարելու համար, իր զինուորական կարողութիւնները սպաս կը դնէր գերմանացիներուն եւ իշխանական կեանք կը վայելէր, գիտէք որ գերմանացիները մոմով կը փնտռէին այդ օրերուն ամուսնոյս պէս զինուորականները« (33):*

*Ոճիրէն շուրջ տարի մը ետք, Տիկ. Հայկուհի ականատեսի վկայութեամբ անուանական դատ կը բանայ ոճրագործներուն դէմ: Սակայն, վրայ հասած ներզաղթին, բոլոր ոճրագործները կը ներգաղթեն Խորհրդային Հայաստան, խոյս տալով արդարադատութեան ճիրաններէն:*

*Ու այսպէս, Կիլիկիոյ մէջ դաշնակցականներու եւ ռամկավարներու կողմէ պոլշեւիկ ամբաստանուած Ս. Արմաղանեան, պոլշեւիկներուն կողմէ կ՚ամբաստանուէր որպէս ֆաշիստ ու իր կեանքի տեւողութեան ան զերծ կը մնայ միակ ճիշդ «ամբաստանութենէն». «Որ բոլորդ ալ գիտէք որ ուխտեալ հնչակեան մըն էր, Ժիրայրներու եւ Փարամազներու մոգական շունչով դաստիարակուած եւ Զէյթունցիներու մարտական ոգիով մեծցած քաջամարտիկ մը, որուն կռնակը Թուրքը շատ քիչ անգամ տեսած էր» (34):*

*Յաւալի կատակերգութիւն:*

*******


ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

18) Նոյն, էջ 44:

19) Գրիգոր Թաքուլեան, «Անթեղուած զաղտնիքներ», Պէյրութ, 1967, էջ 266:

20) Նոյն, էջ 267:

21) Արամ Ասպետ, (յուշագրեց Ա. Սաչեան), «Դրուագներ Հաճնոյ Հերոսամարտէն եւ Հերոսին Ոդիսականը», Պէյրութ, 1961, էջ 120:

22) Բ. Ժամկոչեան, ... էջ 331:

23) Յ. Պօղոսեան, «Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը», Լոս Անճելոս, 1942, էջ 692:

24) . Թաքուլեան, ... էջ 320:

25) Հրաչ Տասնապետեան, «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար», Ա. հտ., Բ. տպագ., Պէյրութ, 1984. Ա. Զալեան, «Հաճընի Ութամսեայ գոյամարտը»:

26) Ա. Կէնճեան, ... էջ 221:

27) Գերսամ Ահարոնեան, «Յուշամատեան Մեծ Եղեռնի», Պէյրութ, 1965, Մ. Ճիհանեան, «Զմիւռնիոյ Աղէտը, բրգ-Աղաճի Հայոց Ազատումը (1922 Սեպտեմբեր)»:

28) «Արարատ», 1948 Մայիս 12. Մարսիլահայ, «Արժանաւոր Ռազմիկ Ս. Արմաղանեան» (արտատպուած «Նոր Աշխարհ»էն): 29-32) «Արարատ», 1960 Յունիս 23-24. «Ողբացեալ Ընկեր Ս. Արմաղանեանի եւ Իր Զինակիցներուն Ոգեկոչման Պատարագ»:

33) «Արարատ» 1960 Օգոստ. 10. «Հնչակեան Հերոս Ս. Արմաղանեանի Սպանութիւնը Խումբ Մը Ոճրածին Հայերու Կողմէ. Մանրամասնութիւններ՝ Պատմում Է Մանրամասնութիւններ՝ Պատմուած Իր Կնոջ Կողմէ»:

34) «Արարատ», 1960 Յունիս 23:





# ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵԼ ՕԳՏԱԿԱՐ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԵՐ ՓԱՓԱՔԸ

*Մարդիկ արդեօ՞ք անձնասէր են, թէ նախապատրաստակամութիւն ունին օգտակար դառնալու ուրիշներուն: Այս հարցումին պատասխանելու համար, Հարվըրտ Համալսարանի հոգեբան Տէյվիտ Ռէնտ կը կատարէ հետազօտութիւններ: Ռէնտ միշտ փափաքած է իմանալ մարդոց բարեգործութեան եւ կծծիութեան գաղտնիքները: Ան անդրադարձած է, որ ամէնէն մեծ բարեգործները նոյնիսկ երբեմն մտահոգուած կրնան ըլլալ իրենց անձնական շահերով եւ այդ պատճառով է, որ կը կատարեն բարեգործութիւններ:*

*Ռէնտ եւ իր օգնականները ուսումնասիրութեան մասնակիցներուն կու տան քառասուն սենթ եւ անոնցմէ կը խնդրեն որոշում առնել, թէ որքա՞նը կը փափաքին նուիրել կարիքաւոր անձի մը:*

*Հետաքրքրական է, որ այն մասնակիցները, որոնք կարճ ժամանակի մէջ կ'առնեն որոշումը, աւելի մեծ գումար կը յատկացնեն բարեգործութեան քան այն մասնակիցները, որոնք երկար ժամանակի մէջ կ'առնեն իրենց որոշումը: Ռէնտ կ'եզրակացնէ, որ արագ որոշումները, որոնք հիմնուած կ'ըլլան զգացումներու վրայ, մարդը կը դարձնեն այլասէր, իսկ երկար ժամանակի մէջ առնուած որոշումները, որոնք հիմնուած կ'ըլլան տրամաբանութեան վրայ, մարդը կը դարձնեն անձնասէր եւ նուազ հակամէտ օգնելու:*

*Այս փորձարկումին հետեւող ուսումնասիրութեան մը ընթացքին, Ռէնտ եւ իր հետազօտական խումբը մասնակիցները կը բաժնեն երկու խումբի: Անոնք առաջին խումբէն կը խնդրեն իրենց որոշումները հիմնել իրենց զգացումներուն կամ նախազգացումներուն վրայ, իսկ երկրորդ խումբի անդամներէն կը խնդրեն իրենց որոշումները հիմնել մտածումի եւ տրամաբանութեան վրայ:*

*Առաջին հետազօտութեան արդիւնքներուն զուգահեռ, երկրորդ ուսումնասիրութեան արդիւնքները ցոյց կու տան, թէ առաջին խումբի անդամները, որոնք վստահելով իրենց զգացումներուն առին որոշումներ, աւելի առատաձեռն էին քան երկրորդ խումբի անդամները, որոնց որոշումներ հիմնուած էին իրենց տրամաբանութեան վրայ:*

*Ռէնտի համաձայն, մարդ արարածը հակում ունի օգնելու ուրիշներուն, սակայն դժուար է իմանալ, թէ այս հակումը գոյութիւն ունի մարդու բնոյթի՞ն մէջ, թէ ան որդեգրուած է ժամանակի ընթացքին մարդոց հետ շփուելու հետեւանքով:*

*Ռէնտի եւ իր գործընկերներու կատարած ուսումնասիրութիւններէն մեկնելով, թելադրելի է, որ մարդիկ իրենց որոշումը առնելէ անմիջապէս ետք կատարեն բարեգործութիւնը, որովհետեւ որքան ժամանակ անցնի, այնքան հաւանականութիւնը կը բարձրանայ բարեգործութենէն հրաժարելու:*

## ԿԻԼԻԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

### ԱՋՆԻՒ ԹԱՐԽԱՆԵԱՆ

Դու Կիլիկեան վարժարան,
Անառիկ բերդ պատմական,
Մեր տարագիրների օթեւան,
ինձիսուն տարուայ պատսպարան
եւ հայ համայնքի գանձարան,
Ուսուցիչների շտեմարան:

Դուք նահատակների անմոռաց վկաներ
Եւ տարագիրներ անմար փարոսներ,
Նահատակների խիզախ ոգով ներշնչուած՝
Հիմնադրեցիք Կիլիկեան Վարժարան
Եւ դարձաք վարժարանի ամուր սիւները,
Եւ ուղեկցեցիք ձեր ժառանգներին դէպի լուսաւոր ապագան:

Մեր վարժարան թանկագին,
Ուսուցիչ, ծնող, աշակերտ միաձուլուեցին
Եւ դարձան ամուր մի ընտանիք,
Եւ դարձան երրորդութեան սուրբ տաճար,
Յոյսի, լոյսի իմ սուրբ տաճար,
Քո սիրով ու ջերմութեամբ սնուեցին սաներդ նորելուկ,
Եւ հաւատքով ներշնչուած տպուեցիր նրանց սրտերում:

Մեր վարժարան պանծալի,
Աշխարհում ինչ էլ լինի, դու՝
մի կրակ ես անմար,
Հաւաքիր ուժերդ սիրելիս,
Հաւաքիր քո շուրջը սաներիդ:
Սիսն ու Մասիսը սպասում են նրանց,
Արարատի ծիւնեպսակ գագաթներով թող գօտի կազմեն,
Որ Հայաստանի մէջքին կապեն,
Որ ամրանայ ու զօրանայ Հայաստան,
Ու նորից ծովից-ծով Հայաստան դառնայ:

## ՀՐԱՇՔ ՅԱՐՈՒԹԻՒՆ

### ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Զատիկ, Յարութիւն,
Զարթօնքը կեանքի,
Տօնը բնութեան,
Սկիզբը գարնան:
Նորից ժամ, աղօթք,
Պատարագ ու խունկ,
Սաղմոս, շարական,
Յանուն խաչուածի
Մեծ յաղթանակի
Հրաշք Յարութեան:

Հայ news.am

# ՀԻՆԳ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԾԻՆԱՅԻՆ ԿԱՊ ՄԸ

*Հոգեբանութեան անհանգստութիւններու ախտանշանները պարզուելէ ետք, ներկայիս հոգեբաններ կը փորձեն յայտնաբերել այս անհանգստութիւններուն եւ անկանոնութիւններուն կենսաբանական արմատները: Բազմաթիւ հոգեկան անհանգստութիւններու պարագային յայտնաբերուած է ուղեղի քիմիական նիւթերու եւ հորմոններու անկանոնութիւնները, սակայն վերջին տասնամեակին գիտնականներ լրջօրէն կը հետազօտեն ծիները, ենթադրելով, որ անոնք եւս մեծ դեր կրնան ունենալ հոգեկան անհանգստութիւններու յառաջացման մէջ:*

*Վերջերս, մասնագէտներ ուսումնասիրելով 33,000 հոգեպէս անառողջ անձեր եւ 28,000 առողջ անձեր կը կատարեն անկիւնադարձային յայտնաբերումներ, հոգեբանութեան ոլորտէն ներս: Ըստ այս ուսումնասիրութեան, Attention Deficit Hyperactivity Disorder-է, Schizophrenia-է, Autism-է, Major Depressive Disorder-է եւ Bipolar Disorder-է տառապող անձերը կը բաժնեն ծինային նոյն անկանոնութիւնները: Յիշեմ, որ վերոյիշեալ հինգ անհանգստութիւնները կը պատկանին բոլորովին տարբեր անհանգստութիւններու խումբերու: Ուսումնասիրութեան մասնակիցներուն մօտ յայտնաբերուած է չորս ծիներու նոյնանման փոփոխութիւններ, որոնք կը նպաստեն հինգ անհանգստութիւններու յայտնումին: Այս ուսումնասիրութեան շնորհիւ, գիտնականները նաեւ կը յայտնաբերեն երկու ծինային փոփոխակներ, որոնք առնչուած են ուղեղին մէջ քալսիումի քանակի հաւասարակշռուածութեան եւ կանոնաւորման հետ:*

*Այս ուսումնասիրութեան արդիւնքները հրատարակուած են «Lancet» բժշկական ամսաթերթին մէջ եւ այս մասին գրած է «American Scientific Mind» ամսաթերթը:*

*Ծինային նոր յայտնաբերումներով հոգեբանութիւնը կը թեւակոխէ նոր հանգրուան, ուր անհանգստութիւնները ոչ միայն կ'ախտաճանաչուին ախտանշաններով, այլեւ կարելի կ'ըլլայ բացատրել անոնց կենսաբանական հիմքերը: Գիտնականներ յոյսով են, որ այս ուսումնասիրութիւններուն շնորհիւ կրնան յառաջդիմել հոգեբանական բուժումները:*

# ՀՈԳԵԿԱՆ ՃՆՇՈՒՄՆԵՐՆ ԱԼ ՏՆՕՐԻՆՈՒՄ ՈՒՆԻՆ

*Հոգեկան ճնշումներու տնօրինումը անհատին համար մեծ կարեւորութիւն ունի, որովհետեւ ան գործօն դեր կը խաղայ զանոնք պակսեցնելու, կեանքի որակը եւ գործին մէջ վարքն ու արտադրողականութիւնը բարելաւելու:*

*Այս տնօրինման գլխաւոր ձեւերն են.*

*1) Առօրեայ առողջապահական ծրագիր որդեգրել, այնպէս որ կարենաս հանգիստի որոշ ժամեր ունենալ, կարելի եղած չափով մտային ու մարմնային լաւ վիճակի մէջ զգալ դուն քեզի:*

*2) Փորձել հակակշռել պզտիկ հարցերը, որպէսզի աստիճանաբար կարենաս մեծ հարցերը հակակշռել:*

*3) Հարցերը իրենց ճիշդ պատկերին մէջ տեսնել, առանց զանոնք մեծցնելու, այլ՝ մեր խնդիրներուն նայիլ իրենց ճշգրիտ վիճակին ու արժէքին մէջ:*

*4) Ապրելակերպը փոխել. հեռանալ վատ սովորութիւններէն, ինչպէս՝ թմրութիւնը, վատ սննդառութիւնը, անքնութիւնը, եւայլն:*

*5) Վարժուիլ ժամանակը տնօրինել եւ խուսափիլ ամէն ինչ միաժամանակ կատարելէ: Գործերը բաժնէ եւ իւրաքանչիւրին համար առանձին ժամանակ տրամադրէ:*

*6) Առաջնահերթութիւնները սահմանել. այս մէկը հրամայական կը դարձնէ նպատակները, պարտականութիւնները եւ գործունէութիւնները դասաւորելու անհրաժեշտութիւնը, ըստ անոնց կարեւորութեան:*

*Ուսումնասիրութիւնները կը նշեն, թէ անհատին մօտ լաւատես ուղղուածութիւնը՝ խոչընդոտող պարագաներու դիմաց աւելի առարկայական արժեւորման կը մղէ զինք:*

*Լաւատես անձը ընդհանրապէս գործնական եւ յաջող միջոցներ կը որդեգրէ ճնշող պարագաներու հանդէպ իր վերաբերմունքին մէջ, եւ ան նուազ ենթակայ կ'ըլլայ հոգեկան ու մարմնային հիւանդութիւններու:*

*Արդարեւ, եթէ փափաքիս մէկ կարեւոր որոշում առնել, այդ մէկը թող ըլլայ հարցերուն լաւատես ակնոցով նայելու որոշումը, ինչ որ քեզմէ պիտի պակսեցնէ գալիք ճնշումներուն բեռը:*

## ԱՍՏԾՈՅ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Այժմ ես կը գամ,
ասում է Աստուած,
Օգնել աղքատին իր
ծանըր կըռւում.
Չեմ թողնի նրան
յաւիտեան լըքուած,
Նա ինձ ապաւէն կանչեց
նեղ օրում:
Վա՜յ ձեզ, հըզօրներ,
որ իր խըրճիթում
Լացացրիք խեղճին,
այրիին ու որբին,
Ու վէս, անպատիժ՝
ասիք ձեր սըրտում
Ո՞վ է վերեւից նայում մեր
ճամբին:
Մի՞թէ կարծում էք՝
չէր տեսնում, լըսում,
Նա, որ ստեղծեց ե՛ւ աչք, ե՛ւ
ականջ.
Մի՞թէ կարծում էք՝
ուժն էր պակասում,
Եթէ համբերեց դատելուց առաջ:
Իմ աչքերն անթարթ
ձեր ճամբի վրայ
Հըսկել եմ անքուն ես
ձեր գործերին,
Էլ չեմ դանդաղի
գալիս եմ ահա,
Ե՛ս, տէր զօրութեանց
Եւ հուրն իմ ձեռին:
Ես հուր եմ ձըգում
ճընշուածի հոգին
Նրա համարձակ
լեզւով ձեզ դատեմ,
Ես ուժ եմ տալիս
աղքատի բազկին,
Նրա թիկունքին՝
գալիս եմ ձեր դէմ:
1902

## ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

*Շարունակուած էջ 1-էն*

Պէրքսանլար՝ դիտել տալով որ ցեղասպանութիւն տեսած եւ ճաշակած հայ ժողովուրդը տակաւին կը գոյատեւէ եւ կը բարգաւաճի, բոլոր դժուարութիւններէ եւ աճաբեկչութիւններէ ետք: Անդրադառնալով Հայ ժողովուրդի աննկուն կամքին եւ օտար ափերու վրայ հայ մնալու իր վճռակամութեան, ան ըսաւ, «Երբ մեր լեզուով կը խօսինք, ուրեմն անոնք ձախողած են»:

Հայ դատի աշխատանքներու ծիրէն ներս, Պր. Պէրքսանլար թելադրեց չկեդրոնանալ միայն «Ընդունման» թէզի վրայ, այլ կենսական նկատեց ուսանողներ պատրաստել որպէսզի լուրջ հետազօտութիւններ կատարեն Հայոց Ցեղասպանութեան պատմագրութեան շուրջ, օգտուելով մանաւանդ այս նպատակի համար տրամադրուած կրթաթոշակներէն ՝Գլարք Համալսարանէն ներս: Ան ներկայացուց Փրոֆ. Թանէր Աքչամը որպէս այն յանդուգն Թուրք ուսանողը՝ որ անցնող տարիներու ընթացքին առաջին անգամ ըլլալով բարձրացուց իր ձայնը եւ դարձաւ Հայոց Ցեղասպանութեան «իրականութեան» խօսնակը:



Փրոֆ. Րիչըրտ Հրայր Տէօքմէճեան

Փրոֆ. Թանէր Աքչամ ամպիոն ներկայանալով շնորհակալութիւն յայտնեց իրեն տրուած այս առիթին եւ ներկայացուց Մասաչուսէցի Գլարք Համալսարանի փոխնախագահը, որ յատկապէս անդրադարձաւ Հայոց Ցեղասպանութեան հետազօտութեան աշխատանքներու համար տրամադրուած կրթաթոշակներուն եւ այս ուղղութեամբ կատարուող դրամահաւաքներուն մասին:



Էտուին Մինասեան, Փրոֆ. Հրայր Տէօքմէճեան, Փրոֆ. Թանէր Աքչամ եւ Գուրգէն Պէրքսանլար

Երեկոյի գլխաւոր դասախօս ՝ Փրոֆ. Թանէր Աքչամ անցնելով յայտագրի կարեւոր բաժնին, ներկայացուց Հայոց Ցեղասպանութեան հետազօտութեան եւ ուսումնասիրութեան յայտագրի ծագումին եւ կարգ մը հայ փրոֆէսորներու դիմագրաւած դժուարութիւններուն մասին այս գետինը բաց պահելու ջանքերուն մէջ: Ան ցաւ յայտնեց որ բազմաթիւ հայկական աղբիւրներ տակաւին կը մնան անտեսուած եւ պէտք եղած ուժը չկայ հետապնդելու եւ ուսումնասիրելու զանոնք: Ասոր հետ նաեւ Թրքական ուրացման «քէմբէյնի» եւ պայքարի վնասակար ազդեցութիւնները, որոնք պատճառ կը հանդիսանան մեծ յուսահատութիւններու եւ կաղացման: Ան շեշտեց որ Թուրք կառավարութիւնը շատ խիստ դիրքեր բռնած է հայ դատի ուրացման գործընթացին մէջ եւ մեծ գումարներ կը յատկացնէ՝ կասեցնելու հետազօտութեան եւ ուսումնասիրութեան աշխատանքները: «Թուրքիոյ կողմէ Ցեղասպանութեան «Ուրացման» քաղաքականութիւնը՝ յատկապէս Ամերիկայի մէջ, իր վատ հետեւանքները ունի»: Ան ըսաւ. «Հարկ է նոր սերունդներ պատրաստել, որպէսզի անվախօրէն հետեւին, սերտեն եւ ուսումնասիրեն Հայոց Ցեղասպանութիւնը: Ամէն մէկ Հայու առաջնակարգ դերը պէտք է ըլլայ աշխուժացնել Հայոց Ցեղասպանութեան ուսումնասիրութեան գործընթացը»:

«Ամէն մէկ Հայու առաջնակարգ դերը պէտք է ըլլայ աշխուժացնել Հայոց Ցեղասպանութեան ուսումնասիրութեան գործընթացը»:

Երեկոյի վերջին բաժնով իր խօսքը եւ թելադրութիւնները փոխանցեց Փրոֆ. Հրայր Տէօքմէճեան, կեդրոնանալով ուսանողներ ներգրաւելու եւ ֆինանսական օժանդակութիւն հայթայթելու հարցերուն վրայ: Ան առաջարկեց արթուն մնալ եւ կանխանշանները տեսնել բոլոր անկիւններէ մօտենալով եւ լուրջ գործունէութիւն ծաւալել՝ ի դիմաց Թուրք կառավարութեան բոլոր ջանքերուն՝ կասեցնելու եւ խանգարելու մեր դատը:

Ի վերջոյ ան իր շնորհակալական խօսքը ուղղեց այս շատ կարեւոր նախաձեռնութեան կազմակերպիչներուն եւ յատկապէս Պոլսահայ Միութեան վարչութեան:

Գնահատելի է, մինչեւ օրս, բոլոր այն կազմակերպութիւններու եւ միութիւններու ներդրումը եւ նիւթական օժանդակութիւնը այս նպատակի համար: Բոլորին վարձքը կատար:

## ՀԱԽ-Ի ՁՕՐԱԿՑԱԿԱՆ ՀԱՒԱՔԸ ԿԼԵՆՏԷՅԼԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ

*Շարունակուած էջ 1-էն*

քաղաքապետական խորհուրդի անդամութեան թեկնածուներ Արա Նաճարեանը, Լորա Ֆրիտմընը եւ Շահէ Քէօրօղլեանը: Անոնք ներկաներուն հարցումներուն պատասխանելէ ետք պարզեցին իրենց ընտրական ծրագիրներուն օգտաշատ առաջադրանքները, որոնք իրենց բարերար նպաստը պիտի բերեն շրջանի բնակչութեան եւ յատկապէս մեր հայ քաղաքացիներուն:

Այստեղ պէտք է կարեւորութեամբ նշել որ 207,000 բնակիչ հաշուող Կլենտէյլի բնակչութեան շուրջ 40 առ հարիւրը հայերէ կը բաղկանայ: Սակայն, մեր հայրենակիցները շատ նուազ համեմատականով ներկայացուած են պետական կառոյցներէն ներս (հրշէջ, ոստիկանութիւն եւ հանրային տարբեր ծառայութիւններ):

Ներկայիս, վերոյիշեալ երեք թեկնածուներն ալ առաջնային դիրք կը գրաւեն: Անոնք՝ ամենուրեք կ'արժանանան շրջանի ազգաբնակչութեան տարբեր խաւերու եւ կառոյցներու խանդավառ ընդունելութեան ու անվերապահ զօրակցութեան:

Նախընտրական այս օրերուն ընտրապայքարը մտած է թէժ մրցակցութեան հանգրուան մը, երբեմն պարզելով անախորժ երեւոյթներ եւ միջամտութիւններ, յատկապէս տարեց եւ բարեմիտ հայ քաղաքացիներու մօտ:

Յաջողութիւն մեր թեկնածուներուն:

## «ՀԱՆԴԻՊՈՒՄ-5» ԳԻՐՔԸ

*Շարունակուած էջ 8-էն*

Յարգելի Յակոբ Վարդիվառեան, դուք արժէքաւոր աշխատանք էք իրականացնում գրքի էջերին դրոշմելով վաստակաշատ անձանց կատարած յիշատակելի գործերը՝ հայապահպանման, մշակոյթի զարգացման, հայրենիքի բարգաւաճման եւ այլ տեսանկիւններից դիտուած:

Սրտագինս մաղթում ենք երկար եւ առողջ կեանք, թող որ հանդիպումներիդ շարանը անխափան շարունակուի ի մխիթարութիւն եւ գնահատանք երախտաշատ անձերի ի փառս հայ ժողովրդի յաւերժ երթին:

Վարձքներդ կատար:

## ՊՈԼՍԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՐԻՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 13-էն*

ծող ժամանակակից մարդկութեան կեանքին մէջ: Փոքրամասնութիւններու հանդէպ «ձերմակերես» երեւնալու Թուրք պետականութեան ներկայ քաղաքականութիւնը ենթակայ է եւրոպական եւ մնացեալ աշխարհի ուշադիր եւ հետեւողական քննութեան (Scrutiny):

Ան ենթակայ է նաեւ մեր հայրենի եւ սփիւռքահայ ժողովուրդի աղմուկ բարձրացնել գիտցող զանգուածներու քննութեան, որոնք ուրախութեամբ կը դիտեն քաղաքացիական արիութեամբ տարած աշխատանքը իրենց պոլսահայ եղբայրներուն եւ քոյրերուն, վերադարձնելու ազգային կալուածները, վերաշինելու աւերուած հայ եկեղեցիները եւ վերակոչելու միլիոնաւոր հայ բեկորները....:

Փառք ու պատիւ պոլսահայ քաղաքացիական արիութեամբ պատեանէն դուրս ելած կորիճներուն եւ անոնց թիկունք կանգնող Թուրք հայասէր եւ ազատամիտ գործակիցներուն:


VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books

Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ

Հին Գիրքերու Նորոգութեան Համար

Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆին



Vahe Atchabahian

1870 E. Layton St. • Pasadena, CA 91104

626-354-5924 • vamedia@yahoo.com

massispost.com

daily news updates

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ՄԱՐԻ ՍԱՐԳԻՍԵԱՆ*

*ՄԱՐԻ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 7 Ապրիլ, 2013, առաւօտեան ժամը 11:00ին, Փասատինայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ, 58 S. Sierra Madre Blvd., Pasadena, CA 91107, որմէ ետք հոգեճաշ պիտի մատուցուի Raffi's Restaurant, 3887 E. Sierra Madre Blvd., Pasadena, CA 91107:*

*Խնդրողներն են՝*
*Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Լինտա Սարգիսեան եւ զաւակունք*
*Տիար Գրիգոր Սարգիսեան եւ զաւակունք*
*Տիկ. Թագուհի Աչճեան եւ զաւակունք (Հալէպ, Սուրիա)*
*Տիկ. Սոնա Տէյիրմէնճեան եւ զաւակունք (Հալէպ, Սուրիա)*
*Տէր եւ Տիկ. Մանուէլ եւ Սվետա Տարաքճեան եւ զաւակունք*
*Տիկ. Անահիտ Պասմաճեան եւ զաւակունք*
*Եւ համայն Սարգիսեան, Աչճեան, Տէյիրմէնճեան, Տարաքճեան եւ Պասմաճեան ընտանիքներ:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

*ՄԱՐԻ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները Կիլիկեան Բարեգործական Միութեան*

| | |
|---|---|
| Տիգրան եւ Գրիգոր Սարգիսեան | $500 |
| Սարգիսեան, Սաֆարեան եւ Երանոսեան ընտանիքներ | $500 |
| Տէր եւ Տիկ. Աւետիս Ատանլեան | $300 |
| Տէր եւ Տիկ. Նազարէթ Ճանսզեան | $200 |
| Տիար Արամ Սահակեան | $200 |
| Gold Star Jewerly Staff | $200 |
| Սարգիս եւ Պօղոս Սասունեան | $200 |
| Տիկ. Վարդուհի Յարութիւնեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Գէորգ Թաւուքճեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Սարգիս Գիլաճեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Յովիկ Լաչինեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ճորճ Մատոյեան | $ 50 |
| Տէր եւ Տիկ. Աւետիս Քիւտողլեան | $ 30 |
| Տէր եւ Տիկ. Սարգիս Ճինպաչեան | $ 25 |
| Տիկ. Օժէնի Պարսումեան | $ 20 |

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*Ընկ. ՍԱՐԳԻՍ ԱՐԱՊԵԱՆԻ մահուան առթիւ Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն:*


# ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՋԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125


## ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

*Հալէպի Կիլիկեան Վարժարանին կատարուած նուիրատուութիւններ՝ նախաճաշի ձեռնարկի առթիւ.*

| | |
|---|---|
| Տէր եւ Տիկ. Սեդրակ Աճէմեան | $500 |
| Տէր Տիկ. Նազարէթ Ճանսզեան | $300 |
| Տէր եւ Տիկ. Սեդրակ Մելքոնեան | $250 |
| Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան | $200 |
| Տէր եւ Տիկ. Սուրէն Կարապետեան | $200 |
| Տիար Յարութ Գալեմքէրեան | $100 |
| Մարի Ժամալեան-Յակոբեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Յարութ Պոյամեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ճորճ Մատոյեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Մարթին Խաչատուրեան | $100 |
| Տիկ. Վարուժան Տոլպաքեան | $100 |
| Տիկ. Ազնիւ Աքըլեան | $100 |
| Տիկ. Վարդուհի Յարութիւնեան | $100 |
| Քէթի Պոսնոյեան | $ 50 |
| Տէր եւ Տիկ. Հրաչ Գիլաճեան | $ 50 |
| Տէր եւ Տիկ. Գէորգ Թաւուքճեան | $ 50 |
| Տիկ. Մայտա Ալթունեան | $ 50 |
| Տիկ. Օժէնի Պարսումեան | $ 50 |
| Սիլվա Գսաճէքեան | $ 50 |
| Սիլվա Եսայեան | $ 50 |
| Տիկ. Սրբուհի Մուրատեան | $ 50 |
| Այվազեան | $ 20 |
| Նազարէթ Քրտողլեան | $ 20 |
| Մի ոմն | $ 20 |
| Մի ոմն | $ 20 |
| Վերգին Սէրայտարեան | $ 20 |

## ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

*Պետրոս Սէֆէրեան գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը $100 կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:*


# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

- - - - - - - - - - - - - - - - - - - - -

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 100,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** -----------------------------------------
**Address:** ---------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**----------------------- **Fax :** -------------------------


**ARMED AND UNARMED SECURITY GUARD SERVICES**
**RFP 7576**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms to provide armed and unarmed security guard services for its various property sites. Copies of the RFP may be obtained beginning March 18, 2013 online at http://www.hacla.org/ps/.**

**Proposals will be accepted until 2:00 p.m., April 18, 2013.**

3/28, 4/4/13
CNS-2459433#
MASSIS WEEKLY


**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**
**T: (626) 797-7680**
**F: (626) 797-6863**
**Massis2@earthlink.net**


**PROJECT BASED VOUCHER NOTICE OF FUNDING AVAILABILITY**
**PBV NOFA NO. 7577**

**The Housing Authority of the City of Los Angeles ("Authority") in collaboration with the Los Angeles Housing Department invites proposals from qualified developers under the Project Based Voucher Program for Permanent Supportive Housing projects that serve extremely and very low income chronically homeless special needs and veteran individuals, and homeless senior and disabled individuals. Copies of the PBV NOFA may be obtained beginning March 15, 2013 online at http://www.hacla.org/ps/. Electronic proposals will be accepted until 11:59pm, April 15, 2013.**

3/28, 4/4/13
CNS-2458998#
MASSIS WEEKLY

**ARMENIAN COUNCIL OF AMERICA**

ՀԱՅ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՍԱՏԱՐՈՒՄ Է ԱՅՍ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ

# ON TUESDAY, APRIL 2ND VOTE FOR

## Ապրիլ 2-ին Քվիարկեք



Chahe Keuroghelian
City Council



Laura Friedman
City Council



Ara J. Najarian
City Council



Dr. Armina Gharpetian
GUSD School Board



Greg Krikorian
GUSD School Board



Joylene Wagner
GUSD School Board

• Proven and effective leaders
• Long-time friends and advocates for the Armenian community
• Problem solvers interested in the progress of the City of Glendale

• Համայնքի երկարամյա ու հաւատարիմ բարեկամներ
• Գլէնդեյլ քաղաքի առաջխաղացման ջատագովներ
• Գլէնդեյլ քաղաքի փորձված ղեկավարներ

OUR FRIENDS WHO HAVE SUPPORTED THE ARMENIAN-AMERICAN COMMUNITY'S INTERESTS FOR MANY YEARS.

**PROGRESS INTEGRITY LEADERSHIP**

Paid for by the Armenian Council of America, PAC ID #1275835
815 E. Colorado Blvd., Suite 140, Glendale, CA 91205